Azg
armenian daily
13 ՆՈՅԵՄԲԵՐ 1997 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 218 (1471)

Յիցխակ Մորդեխայի այցը «ցնցելու է Միջին Արեւելքը»

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ Իսրայելի պաշտպանության նախարար Յիցխակ Մորդեխայը դեկտեմբերի 8-ին այցելելու է Թուրքիա, տեղեկացնում է թուրքական մամուլը, ենթադրելով, որ այդ այցը «ցնցելու է ամբողջ Միջին Արեւելքը»:

Ստամբուլի «Մարմարան», վկայակոչելով թուրքական լրատվամիջոցները, գրում է, որ այցի ընթացքում քննարկվելու են ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել զորավարժությունների մանրամասնությունները: Նշվում է, որ այդ զորավարժությունների նախապատրաստումն ու վերջերս Իսրայելի եւ Թուրքիայի ռազմական համագործակցությունը կրթեր են բորբոքել Միջին Արեւելքում, մասնավորապես՝ արաբական աշխարհում:

Թերթերը նշում են, որ Իսրայելն արդեն սկսել է Թուրքիային հանձնել «Պոպեյ» տիպի 40 հրթիռների սարքավորումները: 150 կմ հարվածային հեռավորություն ունեցող այդ հրթիռներով օդից կարելի է հարվածել ցամաքին: Հաջորդ տարի Թուրքիային կհանձնվի եւս 60 հրթիռ: Նույն աղբյուրների համաձայն, Իսրայելի վարչապետ Նաթանյահուն եւս ծրագրում է առաջիկա ամիսներին պաշտոնական այցով ժամանել Անկարա:

ԱՅԺ

Տավուշի մարզն անկախացավ... Ադրբեջանից

Արցախի կարգավորման շուրջ գաղտնիքի քողը՝ գործին չվնասելու մարտավարություն

ԱՐԱԲ ՊՈՂՈՍՅԱՆ

Երեկ Տավուշի մարզի նորակառույց Իջեւան-Բերդ ճանապարհի Իծաքարին հարող հատվածը բազմամարդ էր, «Հաղթանակ, կայունություն, առաջընթաց», «Պրն նախագահ, մենք Ձեզ հետ ենք», «Պատերազմ, թե՞ խաղաղություն. իհարկե, խաղաղություն» եւ նմանօրինակ այլ ցուցապաստառներով զարդարված: Հայաստանի ամենանախագահասեր եւ, ինչպես հավաստեց մարզպետ Պավել Ասատրյանը, «ընդդիմադիր» մարզի աշխատավորները հավաքվել էին հանրապետության ղեկավարության սերուցքի հետ նշելու «ռազմաստրատեգիական նշանակության» ճանապարհի 36 կմ-անոց հատվածի բացումը (ճանապարհի սահմանամերձ 6 կմ անոց հատվածը նախատեսվում է շահագործման հանձնել միայն ավելի ուշ՝ իսկ գարնանից. բարենպաստ պայմանների դեպքում, կսկսվեն ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները): Ճանապարհը կարեւոր է այնքանով, որքանով տեղավորվում է մարզի սահմաններում, եւ Նոյեմբերյանից մարզկենտրոն (Իջեւան) եւ հակառակ ուղղությամբ ուղեւորվողներին ձերբազատում է 24 սահմանամերձ գյուղերով անցնող նախկին ճանապարհին մեր «հավերժական հարեւանների» կողմից հրետակոծվելու վտանգից:

Հանրապետության նախագահը, որ մի խումբ ազդեցիկ պետական պաշտոնյաների հետ նշելու եկել էր ժամանել անձամբ բացելու ճանապարհի գործարկվող հատվածը, վերջինիս տարբեր հանգրվաններում ստիպված եղավ սիրո եւ մեծարանքի խոսքեր ասել թվում այնպիսի՝ որ նախագահին համեմատում էին Պետրոս Սոսջինի եւ Էյնշտեյնի հետ: Նախագահն իր հերթին «փուլ առ փուլ» հավաստիացրեց հավաքվածներին, որ թեեւ հրաշքներ չեն լինելու, բայց իրավիճակը մարզում եւ հանրապետությունում հաստատուն կերպով բարելավվելու է, հատկապես կայուն խաղաղությունից հետո, եւ որ կարեւոր է, նշեց, որ այլեւ ոչ մի կաթիլ իզուր չի թափվել, եւ Արցախը «ծախելու» մասին խոսակցություններն անհեթեթ են. ինչ սպասում է Ղարաբաղին, ոչ թե փոխզիջում է, այլ մեծագույն հաղթանակ, պարզապես գործին չվնասելու մտահոգությունը ստիպում է մեզ ղեկավարել գաղտնիքը:

Երեկվա օրը նշանավոր էր նաեւ նրանով, որ համընկնում էր Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանի ծննդյան տարելիցին: Այդ, ինչպես նաեւ նախագահի այցի մանրամասների մասին՝ մեր թերթի վաղվա համարում:

Պատերազմի տենդագին նախապատրաստություն Իրանում

ԼՈՆԴՈՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՊՈՒՆԳՈՒՆ: Իրանն ուժեղացնում է իր մարտական հզորությունը առաջին հերթին Բաղդադից դեպի հյուսիս ընկած տարածքում: Հակաօդային պաշտպանության սնորաբաժանումները ծավալվում են նոր դիրքերում Կիրկուկ եւ Մոսուլ քաղաքների միջեւ ընկած շրջանում: Լիակատար մարտական պատրաստության են բերված հակաօդային պաշտպանության ուժերը նաեւ ութ այլ քաղաքներում, որոնք գտնվում են Իրանի մայրաքաղաքը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, այս մասին ասված է Իրանի ընդդիմության կոմյունիկեում:

Իրանի բոլոր պետական ծառայություններն անցել են 24-ժամյա աշխատանքային օրվա: Ընդդիմության փաստաթղթում նաեւ ասված է, որ Սադդամ Հուսեյնը ելույթ է ունեցել իրանյան բանակի բարձրագույն հրամանատարության առջեւ եւ հայտարարել, որ դեռեւս երեք շաբաթ առաջ ստորագրել է գաղտնի դեկավար հրահանգ հնարավոր ռազմական գործողությունների նախապատրաստվելու վերաբերյալ:

Իրանի աղբյուրները նշում են երկրի ռազմական արդյունաբերության աշխատանքի ակտիվացումը: Ժամանակակից զենքի թողարկմամբ զբաղվող մի շարք արտադրություններ ստորգետնյա արտադրամասեր են տեղափոխվել Ռաշիդի, Տիկրիտի, էլ Ավյայի եւ Տայիի շրջանում: Դրանք բոլորն անխափան արտադրանք են թողարկում: էլ Ֆալուջա քաղաքի շրջանում հրթիռների մասեր արտադրող հիմնական գործարանն աշխատում է լրիվ ծանրաբեռնվածությամբ:

Միաժամանակ Լոնդոնի դիվանագիտական աղբյուրներից հայտնի է դարձել, որ Իրանի ակտիվ նախապատրաստությունները ԱՄՆ-ի հետ հնարավոր ռազմական դիմակայությանը լրացվում են Բաղդադի ոչ պակաս ինտենսիվ խորհրդաքաղաքական կոնսուլտացիաներով մի շարք արաբական երկրների հետ:

Նախապատրաստվում է նաեւ ամերիկյան օդուժը

Բաքվի նավթը առափնեց Նովոռոսիյսկ

ԲԱՔՎԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ադրբեջանն այսօր տոնում է Կասպից ծովի կանխահաս նավթի առաջին խմբաքանակի առափնումը Նովոռոսիյսկ: Կսկսի գործել 12 անդամներից բաղկացած միջազգային նավթային ընկերությունը, որը կաղյունահանի ադրբեջանական նավթը: Այդ եւ մյուս խոշոր վակասարերով Ադրբեջանը մինչեւ 2002 թվականը տարեկան 5 միլիոն տոննա նավթ է արտահանելու: Զանազան միջազգային նավթային ընկերությունների ու Ադրբեջանի իշխանությունների փափագն է այնուհետեւ ադրբեջանական նավթը Արեւմուտք հասցնել Բաքու-Ջեյհան ուղեգծով: Ինչպես հաղորդում է Ստամբուլի «Մարմարան», վկայակոչելով թուրքական աղբյուրները, տոնախմբությանը մասնակցում է Թուրքիայի վարչապետ Մեսուտ Յըլմազը:

Ձերբակալվեց Բելոռուսի գյուղնախարարը

ՄԻՆՍԿ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Բելառուսի մայրաքաղաքում ձերբակալվել է այդ երկրի գյուղատնտեսության նախարար Վասիլի Լեոնովը: Ինչպես հաղորդում է DPA գործակալությունը, նա մեղադրվում է պետական ֆոնդերի յուրացման մեջ: Լեոնովին իր գրասենյակում ձերբակալել են նոյեմբերի 11-ին՝ նկարահանող խմբի մասնակցությամբ: Ռուսաստանի «Նովոսի» լրատվական գործակալության հաղորդման համաձայն, հեռուստատեսությամբ արդեն ցուցադրվել են նկարահանված կադրերը: Ձերբակալվել է նաեւ Մոգիլյովի շրջանի խոշորագույն կոլտնտեսության նախագահ Վասիլի Ստարովոյտովը: Բելառուսի ՆԳՆ-ն հայտարարել է, որ Լեոնովն ու Ստարովոյտովը յուրացրել են 1996 թվականին այդ կոլտնտեսությանը տրամադրված 30 մլրդ բելառուսական ռուբլի (200 հազար դոլար) պետական վարկը:

ԱՌԱՋԻԿԱ

Եվրախորհրդի ներկայացուցիչները Հայաստանի վերաբերյալ կկազմեն վերջին զեկույցը

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրախորհրդում հատուկ հրավիրյալի կարգավիճակ ունեցող Հայաստանը ավելի է մոտենում լիիրավ անդամ դառնալուն, ընթացակարգային առումով առաջ ընկնելով Վրաստանից եւ Ադրբեջանից: Եվրախորհրդին անդամակցելու ընթացակարգի համաձայն, լիագումար նիստում տվյալ երկրի մասին պետք է լսվի առնվազն երկու զեկույց: Հայաստանի վերաբերյալ առաջին զեկույցը նախապատրաստելու է Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի մարդու իրավունքների ենթահանձնաժողովը, որի ներկայացուցիչները Հայաստան էին եկել հոկտեմբերին:

Պաշտոնական եռօրյա այցով երեւան ժամանած ԵԽԽՎ-ի քաղաքական հարցերի հանձնաժողովի զեկուցող էյսո Վոլտերը եւ իրավական հարցերի հանձնաժողովի զեկուցող Լորդ Էնարեսը Հայաստանի վերաբերյալ պատրաստելու են երկրորդ զեկույցը:

ԵԽԽՎ-ում Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար Շմավոն Շահբազյանի կարծիքով, Հայաստանի անդամակցության հարցը Եվրախորհրդում կքննարկվի գարնանը: Դա կապված է լիագումար նիստեր հրավիրելու ժամանակացույցի հետ: Լիագումար նիստերը, որոնց մասնակցում են բոլոր անդամներն ու հատուկ հրավիրյալի կարգավիճակ ունեցող երկրների պատվիրակությունները, գումարվում են տարեկան չորս անգամ:

Պարոն Շմավոնյանը հույս հայտնեց, որ վեհաժողովի որոշումը դրական կլինի, որի հիման վրա էլ Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, կարելի է ասել, գործադիր մարմինը, որոշում կընդունի Հայաստանի լիիրավ անդամակցության մասին:

ՏԱՍՏԱՌՈՏ

Վաղը Երեւան կժամանի «Ռուսգազարդի» պատվիրակությունը

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հայտնի է դարձել Արմենպրեսին, նոյեմբերի 14-ին Երեւան կժամանի Ռուսաստանի «Գազարդ» ընկերության ներկայացուցչական պատվիրակությունը: Նույն օրը կառավարության ընդունելությունների տանը տեղի կունենա «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության հիմնադիր կոնֆերանսը, որին նախատեսվում է, որ կմասնակցեն նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը: Մեր ունեցած տեղեկատվության համաձայն, կոնֆերանսի ընթացքում պետք է ընտրվի այդ փակ բաժնետիրական ընկերության խորհուրդ եւ գործադիր վարչություն:

Հեռացվեց EDIPA-ի տնօրենը

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ըստ հայաստանի աղբյուրների, ՀՀ առեւտրի ու արդյունաբերության նախարարությանն առընթեր Ձեռնարկությունների զարգացման ու օտարերկրյա ներդրումների աջակցման հայկական գործակալության (EDIPA) տնօրեն Բորիս Հարությունյանը հեռացվել է աշխատանքից: Նախատեսվում են նաեւ փոփոխություններ հիմնադրամի ծրագրերում ու կառուցվածքում: Հիմնական պատճառը EDIPA-ին կից Ձեռնարկությունների աջակցման հիմնադրամի (ՁԱՀ) հետ կապված վիճելի հարցերն են եղել:

ԳՅՈՒՄՐԻ

Ողբերգություն, որ կարող էր նաեւ չլինել

Ասուլիս մեկ իրական գործի առթիվ

ՈՍԿԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի լրագրության պատմության մեջ առաջին անգամ կոնկրետ մեկ իրական գործի առիթով, նոյեմբերի 12-ին, ՀՀ դատախազությունը հրավիրել էր մամուլի ասուլիս: Այն վարում էր ՀՀ դատախազության լրատվության եւ միջազգային կապերի բաժնի պետ Գուրգեն Ամբարյանը, իսկ ասուլիս տվողների դերում հանդես էին գալիս ՀՀ դատախազության ենթակա մասի պետ Էդուարդ Ասատվածատրյանը, նրա տեղակալ Հովհաննես Ստեփանյանը, գլխավոր դատախազին առընթեր հատկապես կարեւոր գործերի ննչիչ Ալբերտ Մարգարյանը: Հրավիրված էին նաեւ ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական կենտրոնի բաժնի վարիչներ Էդվարդ Եղիազարյանը, Երվանդ Մակարյանը, Սերգեյ Մարգսյանը եւ Ռոմեն Բալայանը:

Նյութը վերաբերում էր հասարակական մեծ հնչեղություն ստացած մի ողբերգության սույն թվի օգոստոսի 11-ին Գյումրի քաղաքի ՆԳ 4-րդ բաժանմունքում հնչնաստանություն կատարած քաղաքացի Գալուստ Դիլանյանի մահվան հանգամանքներին:

Գործի ննչությունն անցկացրած որն Ալբերտ Մարգարյանը լրագրողներիս հաղորդեց հետեւյալը. օգոստոսի 11-ի առավոտյան Գյումրի քաղաքի բնակչուհի Ինգա Խաչիյանը ՆԳ 3-րդ բաժանմունքում հայտարարություն է տվել, որ օգոստոսի 10-ից 11-ի գիշերը երկու անծանոթներ խաբեությամբ, իբր ամուսնուց նամակ բերած լինելու համար, մուտք են գործել իր բնակարան, պահանջել 500 դոլար, առդա զենքի սպառնալիքով իրենից հափշտակել են 32 գրամ քաշով ոսկե շղթան եւ հեռացել: Իրավաբանական լեզվով ասած, կատարվել է ավազակություն: Հարուցված իրական գործով կասկածվել է 23-ամյա Գալուստ Դիլանյանը, որի հայրը դեռեւս երկու ամիս առաջ 1200 դոլարով գնել է Ինգա Խաչիյանի ամուսնուն պատկանող «Ժիգուլի» ավտոմեքենան:

Տես # էջ 2

ԱԶԳ

ՏԵՂԱԿԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

Հովհաննես Հովհաննիսյան

Ինչպես տեղեկացրել էինք, այսօր, ժամը 14-ին, տեղի կունենա նորոգ հանգուցյալ Հովհաննես Հովհաննիսյանի հուղարկավորությունը, այդ կապակցությամբ հետեւյալ տեղեկությունները նպատակ ունեն հիշողության մեջ ամրագրելու պետական-կուսակցական գործչի նրա բավական հարուստ կենսագրության գլխավոր գծերը:

Հ. Հովհաննիսյանը ծնվել է 1919 թ. Երեւանում: Յոթնամյա կրթությունը Մյասնիկյանի անվան դպրոցում ստանալուց հետո, 1936 թ. ավարտել է Երեւանի լեռնա-մետալուրգիական տեխնիկումը, իսկ այնուհետեւ՝ Երեւանի պոլիտեխնիկական (այժմ՝ ճարտարագիտական) ինստիտուտը, որպես ինժեներ-տեխնոլոգ: 1941-42 թթ. ծառայել է սովետական բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է ուղարկվել Ալավերդի, որպես պղնձարջասպի գործարանի հերթափոխի պետ: Կարճ ժամանակում դառնում է գործարանի արտադրության պետ: 1945 թ. նշանակվում է Երեւանի մուլիտի գործարանում նախ հերթափոխի, ապա արտադրամասի պետ, իսկ ավելի ուշ՝ նույն գործարանի կուսկազմակերպության քարտուղար:

1948-54 թթ. Հ. Հովհաննիսյանը եղել է Երեւանի Օրջոնիկիձեի շրջկոմի քարտուղար, ապա մայրաքաղաքի քաղկոմի արդյունաբերության եւ տրանսպորտի բաժնի վարիչ. ընտրվում է քաղխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ: Մի շրջան վարել է Երեւանի Լենինյան շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, իսկ 1972-75 թթ. եղել է Հայաստանի առեւտրի նախարար: Մի քանի անգամ ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր: 1975-76 թթ. եղել է Հայաստանի նախարարաց խորհրդի աշխատանքային ռեսուրսների օգտագործման պետկոմիտեի նախագահ, իսկ մինչեւ 1982 թ. Հայաստանի աշխատանքի պետկոմիտեի նախագահ: 1982 թ. ի վեր Հ. Հովհաննիսյանը հանրապետական կարգի թոշակառու էր:

ԳՅՈՒՄՐԻ

Ողբերգություն, որ կարող էր նաեւ չլինել

Սկիզբը էջ 1

Վաճառքը կատարել է կինը, իսկ Մոսկվայում գտնվող ամուսինը լիազորագիր պիտի ուղարկեր, որը ստանալու համար Գալուստ Դիլանյանը երկու ամիս շարունակ բազմիցս գնացել-եկել է Խաչիյանի բնակարան: Դեռեւի առթիվ Ինգա Խաչիյանի 6-ամյա որդին ՆԳ աշխատակիցներին հայտնել է, թե «գիշերն իրենց տուն մտածներից մեկը Գալուստ դյադյան էր» (մի բան, որ չի հաստատել չափահաս մայրը): Ահա այս խախուտ հիմքերով Գալուստ Դիլանյանը բերման է ենթարկվել ՆԳ բաժանմունք, մինչեւ ժամը 17-ը նրան հարցաքննել են, ներկայացրել 6-ամյա երեխայի ճանաչմանը (որն Աստվածատրյանը սա բնորոշեց իբրեւ միանգամայն անիմաստ գործողություն, քանի որ երեխան մինչ այդ լավ ճանաչելիս է եղել Գալուստին): Կասկածյալը հրաժարվել է որեւէ ցուցմունք տալուց, որպեսզի «իրեն բան չկպցնեն», եւ ժամը 18-ի սահմաններում քննիչը հայտնել է բաժանմունքի աշխատակիցներին, թե «Դիլանյանին ձերբակալելու համար բավարար հիմքեր չկան» (մինչ այդ խուզարկվել է նաեւ Դիլանյանների բնակարանը եւ այնտեղ ոչ զենք, ոչ էլ հափշտակված ոսկե շղթա չի հայտնաբերվել):

Թվում է, թե այսմանից հետո կասկածյալին պետք է ազատ արձակեին եւ ուղարկեին տուն: Սակայն ՆԳ 3-րդ բաժանմունքի պետի պաշտոնակատար Ռաֆիկ Գաբրյանը իր աշխատակիցներին հանձնարարել է Գալուստ Դիլանյանին տեղափոխել չորրորդ բաժանմունք: Ասուլիսը վարողները այս հանձնարարությունը գնահատում էին որպես անօրինական, իշխանության գերազանցման գործողություն: Մինչեւ գիշերվա ժամը երկուս անց կես այստեղ կասկածյալին ծեծել են, ապա դարձյալ ապօրինի կերպով մտցրել հերթապահ մասի «երեք ժամանոց» կոչվող խուցը (1,2 քառ. մետր մակերեսով այդպիսի խցերում մարդուն երեք ժամից ավելի պահելու իրավունք չկա): Այս եւ հարեւան խցում եղել են նաեւ ուրիշ երեք հոգի: Նրանց ինելուց հետո, ըստ գործով ձեռք բերված ապացույցների, Դիլանյանը գիշերվա 4-7-ը ընկած ժամանակաընթացքում իր հագի վերնաշապիկը ոլորելով եւ օգտագործելով որպես պարան կախվել է բանտաճաղերից եւ այդ կերպ ինքնասպան եղել: Փաստը հայտնաբերվել եւ արձանագրվել է առավոտյան ժամը 7-ին: Այս առթիվ ՀՀ քր. օր. 104 եւ 184 հոդվածներով, ինքնասպանության հասցնելու եւ անփութություն դրսեւորելու համար, քրեական գործ է հարուցվել ՆԳ չորս աշխատակիցների նկատմամբ, որոնցից երկուսը վերցված են կալանքի: Ավելացնեմ, որ հետագա քննությունը միանշանակ ապացուցել է, թե չարաբաստիկ ավազակային կողոպուտի հետ զոհվածը որեւէ կապ չի ունեցել:

Ես դիտավորյալ գործածում եմ «զոհված» բառը, քանզի ասուլիսի ընթացքում հանդգնվեցի 23-ամյա, բարձրագույն կրթությամբ, 1.5 սարեկան երեխայի հայր Գալուստ Դիլանյանը դարձել է Գյումրիի ՆԳ 3-րդ եւ 4-րդ բաժանմունքների աշխատակիցների անսիրտ ու անմարդկային վերաբերմունքի զոհը: Հակառակ գործընկերներիս, ես չեմ ուզում կասկածի տակ առնել ոչ քննիչի ձեռք բերած ապացույցների հավաստիությունը, ոչ նրա ու փորձագետների անաչառությունն ու մասնագիտական պատրաստության մակարդակը: Ի վերջո, թող դատարանը որոշի, թե Գալուստ Դիլանյանն ի՞նքն է ինքնասպան եղել, թե՞ նրան կիսամեռ վիճակում կախել են կալանախցի վանդակաճաղերից: Ո՞վ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ե՞րբ... Այս բոլոր հարցերը փորձում էին պարզել հրավիրված լրագրողները, եւ ժամանակ առ ժամանակ ասուլիսի մթնոլորտը ուղղակի ցիկանում էր: Այդ ամբողջ տխուր պատկերը այստեղ ներկայացնելը հարմար չեմ գտնում: Ես ուզում եմ հասարակության ուշադրությունը սրել կոնկրետ այն բանի վրա, ինչն արդեն որեւէ կասկածից դուրս է իրավապահ մարմինների այն աշխատակիցները, ովքեր ուղղակի պարտավորություն ունեին պաշտպանելու Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում նաեւ զոհված Գալուստ Դիլանյանի կյանքը, պատիվն ու արժանապատվությունը, հանցավոր ոտնձգություն են կատարել նույն այդ կյանքի, պատվի ու արժանապատվության վրա եթե նրան անմեղ տեղը չկասկածեին չկատարած հանցանքի մեջ, եթե չփորձեին ծեծելով խոստովանեցնել տալ այդ չկատարած հանցանքը, ապա այս ողբերգությունը չէր լինի:

Եզակի՞ դեպք է: Ցավոք, չեմ հավատում: Իրավապահ մարմիններում մարդկանց հանդեպ այսպիսի անթույլատրելի վերաբերմունքի մասին բազմաթիվ այլ վկայություններ էլ են համառորեն շրջում հանրապետությունում:

ՆԳ եւ ԱԱ նախարարության աշխատակիցները հաճախ վիրավորվում են լրագրողներից իրենց հասցեին «չհիմնավորված» մեղադրանքներ «շպրտելու» համար: Գոնե կոնկրետ այս դեպքում մեղադրանքը լիովին հաստատված է:

Կուզենայի հավատալ, որ սա շատ լուրջ մտորումների առիթ կծառայի ՆԳ ողջ համակարգի, նրա բոլոր աշխատակիցների համար: Մինչեւ նրանք ամեն պահ չհիշեն, որ գործ ունեն մարդու, նրա անկրկնելի կյանքի, նրա արժանապատվության հետ, մինչեւ բոլորը ամենաբարձրաստիճան պաշտոնյայից մինչեւ շարային ոստիկանը իրենց վարքագծի նորմա չդարձնեն հարգանքը դեպի մարդը, նրա սահմանադրական իրավունքները, իրենց պարտականությունների կատարման ժամանակ խստորեն օրենքով առաջնորդվելը, մեր հասարակությունն ապահովված չի լինի նմանօրինակ ողբերգություններից: Ավելին, մեզնից յուրաքանչյուրը, այդ թվում նաեւ իրավապահ մարմինների աշխատակիցներն ու նրանց որդիները, ամեն պահ կարող են հայտնվել Գալուստ Դիլանյանին ողբերգական վախճանի հասցրած իրավիճակում:

Վանոն վանեց լրագրողներին

Երեկ «Ափ ընդ Դաուն» սրճարանում Մամուլի ազգային ակումբի շուրջ 30 լրագրողներ մոտ 1 ժամ սպասեցին ակումբի հյուրին՝ Երեւանի քաղաքապետ, ՀՀՇ վարչության նախագահ, Ամ պատգամավոր Վանո Սիրադեղյանին:

Վերջինս այդպես էլ չժամանեց՝ տարակուսանքի մեջ թողնելով «Ազգի», «Նոյյան տապանի», «Առավոտի», «Լրաբերի», Արմենպրեսի, «Հայոց աշխարհի», ԱՐ, Ա1+ հեռուստաընկերությունների թղթակիցներիս: Քաղաքապետարանի լրատվական ծառայությունում չգիտեին Սիրադեղյանի գտնվելու վայրը, թեպետ, կարծում եմ, որ կարեւոր չէ, թե որտեղ է անհետացել Սիրադեղյանը, մանավանդ որ էթիկայի տարրական կանոնները պահանջում են նախապես տեղյակ պահել բացակայության մասին:

Ուշ երեկոյան միայն, երբ «Ազգի» թղթակիցը վերադարձավ Տավուշից, պարզվեց, որ քաղաքագլուխը ուղեկցել է հանրապետության նախագահին:

«Արմենտելը» եւս չորս հեռախոսակայան կփոխարինի նորով

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: «Արմենտել» ընկերությունը սկսել է թիվ՝ 52, 53, 56, 58 հին ավտոմատ հեռախոսակայանների վերամիացման աշխատանքները նոր թվային կայաններին: Նախկինում թվային կայան էր միացվել նաեւ 44 համարին: Ընկերությունը չի ծշտում, թե երբ կավարտվեն այդ աշխատանքները:

Նշված հեռախոսակայանների բաժանորդներին հայտնվում է, որ «5» նիշով սկսվող կայանների միջեւ միացումները կկատարվեն մի փոքր ընդմիջումով եւ համարը հավաքելուց՝ մոտ 10 վայրկյան հետո:

«Արմենտելը» հայտնում է նաեւ, որ նշված աշխատանքների կապակցությամբ այդ հեռախոսակայանների բաժանորդները ժամանակավորապես, միջքաղաքային ավտոմատ հեռախոսակապ հաստատելու համար զանգահարվող ուղղության կոդը եւ կանչվող բաժանորդի համարը հավաքելուց հետո պետք է նաեւ հավաքեն «2» թվանիշը, որից հետո՝ սեփական հեռախոսահամարը (8+ուղղության կոդը+զանգվող համարը+2+սեփական համարը): Հայտնվում է, որ վերոհիշյալը կրում է ժամանակավոր բնույթ, մինչեւ նշված հեռախոսակայանները նոր թվային կայաններին վերամիացնելը:

Հայերի արկածները Գերմանիայում

Գերմանական «Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե Ցայտունգ» թերթի նոյեմբերի 3-ի համարում ներկայացվել է ոմն միջնորդի օգնությամբ Գերմանիա հասած եւ լիված հայկական ընտանիքի արկածների պատմությունը:

Ըստ լուրի, երկու կանանցից եւ երկու տղամարդկանցից կազմված ընտանիքի 65-ամյա հայրը ճանապարհին մահանում է, եւ հարազատները՝ ձեւացնելով, թե նա հիվանդ է, վարձում են մի ավտոմեքենա ու Գերմանիայի մի ծայրից անցնելով՝ հասնում են Հանովեր քաղաք: Այստեղ նրանք ոստիկանությանն են հանձնում հոր դիակը եւ ապաստան խնդրում: Բժշկական քննությունից պարզվում է, որ մահը բնական է: Ըստ երեւույթին, չորս փախստական հայերը ապաստան չեն ստանա եւ կլինեն Գերմանիան:

ԲԳՐՈՇ

Մանկության անլռելի զանգակները

«...Վազել-մտնել ուղիղ դպրոցի բակ այնտեղ բոլորն իմ ընկերներն են, այնտեղ չկան կեղծ ժպիտներ, եւ իսկական է մարդկությունը» Ռուբեն Հախվերդյանի երգի այս տողերը անբաժան են եղել մեր սերնդից: Նոր ժամանակները, որոնք հաճախ այպանում ենք հարաբերությունների եղծման համար, անզոր են ոչնչացնել գոնե այն, ինչ ի բնե գոյություն ունի փոքրիկ մարդկանց մեջ: Գեղեցիկի նկատմամբ հակումը: Եվ լավ է, որ ծնողներից շատերը կարողանում են հոգսաբաս վազքի մեջ ժամանակ գտնել նվիրվելու երեխաներին, որն էլ մարմին է առնում երեխաների թրթռուն էության ձեւավորումով՝ իբրեւ հեռադարձ երախտագիտություն: Յուրաքանչյուր երեխա իր կյանքում ունենում է նաեւ իր ուսուցչին, որը մանկությունից հետո շարունակում է մնալ հոգու նվիրական անկյունում: Շատ է խոսվում, որ դժվար կյանքից պարտադրված ուսուցիչները լքում են ասպարեզը, բայց, Փառք Աստծուն, դեռ կան նվիրյալներ, որոնց կարիքը երեխաներն այնքա՜ն ունեն: Որոնց աշխատանքը տոն է երեխաների համար: Նման մի մեծ տոն նվիրվեց երեխաներին Սեծարենցի անվան թիվ 146 դպրոցում, եւ որի հեղինակը միայն Մարիետա Դավթյանը չէր, այլ բոլոր ուսուցիչները, քանի որ կազմակերպչի բնորոշմամբ այստեղ կենտրոնացած են այն հազվագյուտ աշխատանքային ընկերները, որոնք պատրաստակամ են միշտ ձեռք մեկնելու: «Որոնում ենք տաղանդների» մրցույթի կազմակերպումն մեկամյա անդադար աշխատանքի ընթացքում ամբողջ դպրոցը ստեղծագործելու մթնոլորտով եւ սպասման անհամբերությամբ էր լեցուն: Մասնակից էին կամենում դառնալ բոլորը, եւ շուրջ 50 երեխաներ 2-10-րդ դասարանների, ի վերջո հանդես եկան հսկա դահլիճի առջեւ: Կրթօջախի նախկին սան Մկրտիչ Հոգդարձյանի տրամադրած տեխնիկական միջոցները ապահովելով անթերի ձայն ու երաժշտություն եւ բարձրակարգ լուսային ձեւավորում, տոնն ավելի գեղեցիկ էին դարձնում: Մրցույթն ընթանում էր երեք տարիքային խմբերի միջեւ, պարի, երգի եւ ասմունքի ժանրերում: Հատկանշական է, որ հատուկենտ բացառությամբ, ներկայացվում էին հայկական պոեզիան եւ երաժշտությունը: Ընդհանուր ոգեւորության ու ձգման մեջ առանձնանում էին առավել օժտվածները, ինչպես Տաթեւիկ Հովհաննիսյանը, Էդգար Հակոբյանը, Մարիամ Աբրահամյանը, Մերի Մարտիրոսյանը, Վահագն Մկրտչյանը, Սարգիս Բագրատունյանը, Թամարա Արշակյանը... Հենց միայն մրցանակակիրների անունները դժվար է թվարկել: Կրթօջախի տնօրեն Կ. Քոչարյանը, լինելով ժյուրիի կազմում, ասաց, թե որքան բարդ է ընտրելը, երբ բոլորն են շնորհաշատ: Մեծակա դպրոցներից հրավիրվածները բոնկվեցին մեկնարկը շարունակելու եւ ընդլայնելու ցանկությամբ:

«Տուր ինձի, Տեր, ուրախություն անանձնական» Սեծարենցյան դպրոցը նույնպես հաստատում է դպրանոցի իր առաքելությունը:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգային շարուածը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

«Արցախի հիմնահարցի էության պարզաբանումը եւ կոնցեպտուալ մոտեցումների հստակեցումը»

Նոյեմբերի 12-ին Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում «Ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» համահայկական համաժողովի կազմկոմիտեն եւ Հայաստանի մտավորականության խորհուրդը հրավիրել էին «կլոր սեղան»՝ այս հրապարակման վերնագրում նշված հարցի շուրջ:

Չնայած լրագրողները հրավիրված չէին, սակայն թանգարանի առջեւ հավաքվել էր մեր գործընկերների մի սվար բազմություն, իբրեւ աղացույց, թե որքան կենսականորեն կարեւոր է համարում լրագրողական հանրությունը խնդրո առարկան: Սկզբում լրագրողներին հայտարարվեց, թե քննարկումը փակ է լինելու: Բայց երբ պարզվեց, որ «կլոր սեղանին» չեն մասնակցելու ՀՀ նախագահը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, ԼՂՀ վարչապետը, ինչպես նաեւ արտաքին գործերի, ազգային անվտանգության նախարարները, որոնց հրավեր էր ուղարկված, «Ի պաշտպանություն ԼՂՀ» կազմկոմիտեի ղեկավար, ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանի առաջարկով որոշվեց նիստերի դահլիճ հրավիրել բոլոր լրագրողներին: Ընդսմին, Արամ Սարգսյանը հեգնանքով նկատեց, թե ՀՀ նախագահը, որն իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածով պատրասկամություն էր հայտնել «մասնակցել ցանկացած մակարդակի բանավեճի», իմանալով, որ հենց այդպիսի բանավեճ է անցկացվում, մեկնել է Տավուշ: Այդ պայմաններում փակ քննարկում անցկացնելը դառնում է անիմաստ:

Ինչեւէ, «կլոր սեղանը» հակիրճ խոսքով բացեց ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը, ելույթներ ունեցան ակադեմիկոսներ Վլադիմիր Խոջաբեկյանը, Դավիթ Սեդրակյանը, Լյուդմիլա Հարությունյանը, Լենսեր Աղալովյանը, նկարիչ Սարգիս Մուրադյանը, դոկտոր Ազատ Եղիազարյանը, քաղաքագետ Հակոբ Հակոբյանը, Ֆիլարետ Բերիկյանը, Անդրանիկ Բուռնազյանը, Ռուբեն Թորոսյանը, Խաչիկ Սամբոլցյանը, Ալբերտ Բաղդասարյանը եւ բազմաթիվ ուրիշներ:

Բոլոր ելույթ ունեցողների հիմնական ասելիքը Արցախի հարցում հանրապետության նախագահի դիրքորոշման քննադատությունն էր, դատապարտումը, մերկացումը: Դրանց անդրադարձը շատ մեծ տեղ կզբաղեցներ: Հիմնականն այն էր, որ ձեւակերպեց ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը՝ «կարելի՞ է, արդյոք, հայրենիքը տալ խաղաղության փոխարեն»:

Մասնակիցները վստահություն հայտնեցին, որ ժողովուրդը կմերժի նախագահի «պարտվողական դիրքորոշումը» եւ նրան կհարկադրի կատարել Արցախին տեր կանգնելու իր պարտքը, հակառակ դեպքում նախագահը պետք է հեռանա:

ՈՍՊԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ի պաշտպանություն ԼՂՀ»-ի կազմկոմիտեն եւ Հայաստանի մտավորականության խորհուրդը տարածել են բռուցիկ-հայտարարություն՝ ժողովրդին հրավիրելով իր կամքը արտահայտելու հանրահավաքում՝ նոյեմբերի 14-ին, ժ. 15:00-ին, Ազատության հրապարակում:

«Սոխ» ու «սխտոր» Հայաստանի քաղաքական դաշտում

Բոլորովին էլ ոչ բանջարաբոստանային դիտարկումներ

Մեր հարազատ Հայաստանի Հանրապետությունում ինչքան ասես հասարակական-քաղաքական կազմակերպություններ, այսինքն՝ կուսակցություններ կան: Ժողովրդավարության շնորհիվ: Եվ ինչպես ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, մեր կուսակցությունների մի մասն «աջ» է, մյուսը՝ «ձախ»: Սակայն անգամ քաղաքականապես հասուն ազգաբնակչության շրջանում հաճախ շփոթություն է առաջանում մեր կուսակցությունների «տեսակը» որոշելու պարագայում:

Այս շփոթության պատճառը շփոթությունն է: Բանն այն է, որ կուսակցությունները երբեմն շփոթում են իրենց տեղը երկրի քաղաքական դաշտում: Դա ցայտուն է երեւում թե՛ ընտրություններից առաջ, թե՛ ընտրությունների ժամանակ, թե՛ հետո: Չգիտես ինչու, մեր որոշ «ձախ» կուսակցություններ հայտնվել են «աջերից» կազմված հանրակցությունում: Կամ էլ՝ որոշ «աջեր» հայտնվում են գլխավորապես «ձախերից» կազմված «դաշինքում»:

Նույն բանը, բնականաբար, նկատվում է մեր խորհրդարանում, որտեղ, ինչպես բոլոր ժողովրդավարական կամ իրենց այդպիսին համարող երկրներում, տեղի է ունենում հիմնական քաղաքական պայքարը: Օրինակ՝ Ռուսաստանի Պետական դուման, որ այդ երկրի խորհրդարանի ստորին պալատն է: Այստեղ Աստծո ամեն օր «աջերը» պայքարում են «ձախերի» դեմ՝ բանավեճերի եւ կոնցեպցիաներ սեղմելու ու չսեղմելու միջոցով: Այստեղ էլ երբեմն որեւէ հարցում մի «աջ» կուսակցություն դաշնակցում է «ձախի» հետ: Բայց դա կարճ է տեւում եւ հետաքրքրում է ժամանակավոր մարտավարական նպատակ, մինչդեռ մեզանում հաճախ երկարաձգ ռազմավարության բնույթ է կրում:

Մի խոսքով, խորհրդարանական շիլաշփոթ է տիրում մեր քաղաքական դաշտում, որի պատճառով հանրապետության քաղաքագիտի բյուրեղյա երազը՝ երկրում «աջ» ու «ձախ» քաղաքական կենտրոններ ունենալը մնում է անկատար: Իսկ ամենակարեւորը՝ տարաբախտ ազգաբնակչությունն ընկնում է անորոշության գիրկը: Բնավորության եւ նախասիրության պատճառով «ձախ» հայացքներ չունեցող բնակիչը չգիտի ո՞ւմ տալ իր բանկագին ձայնը:

Հետեւաբար, պահանջ է զգացվում՝ հստակություն մտցնել նաեւ այս հարցում եւ շփոթվող կուսակցությանը ցույց տալ նրա իսկական տեղը:

Սա, ինչպես ցույց է տալիս փորձը, հեշտ խնդիր չէ: Բայց, ինչպես ասում են, անելանելի վիճակներ չկան: Հեշ որ չէ՝ կարելի է օգտվել ավելի բազմափորձ երկրների փորձից: Չի խանգարի անգամ հետեւել մեր հարեւան Թուրքիային: Ճիշտ է, խոսքը չի վերաբերում մեր նկատմամբ արտակարգ ջերմ ու բարեկամական տրամադրված այս պետության քաղաքական ղեկին:

Դարասկզբին, թուրքական բանակում շարային վարժությունների ժամանակ հրամանատարությունը հուսահատության հասցնող դժվարությունների էր հանդիպում: Ասկյարները, որ «էն գլխից» այդի չեն ընկել վերացական մտածողությամբ, շփոթում էին աջն ու ձախը: Բեղավոր յուզբաշին բղավում էր «աջ դարձ», իսկ շարասյան մի մասը ձախ էր դառնում: Ի վերջո, մի փաշա այդ շփոթությունը հաղթահարելու համար առաջարկում է յուրաքանչյուր զինվորի մի գրպանում դնել սոխ, մյուսում՝ սխտոր: Եվ յուզբաշին «աջ դարձի» փոխարեն բղավում է «սոխ», «ձախ դարձի» փոխարեն՝ «սխտոր»: Այս միջոցը ցանկալի արդյունք տվեց: Ասկյարները, որոնց մտածողությունը ծագումնաբանական պատճառներով պարզունակ առարկայական էր, անհամեմատ հեշտ էին կատարում հրամանները՝ հաղթահարելով շփոթությունը:

Ինչպես կռահեցիք, յուզբաշիների փորձը կարելի է ստեղծագործաբար կիրառել մեր քաղաքական դաշտում: Հստակություն մտցնելու համար: Իսկ մեր շփոթվող կուսակցությունների ազդեցիկ առաջնորդների գրպաններում հարկավոր է սոխ ու սխտոր դնել: Եվ ոչ թե մեկ ուրիշ բան: Մեր հին ու նոր կուսակցությունները դրանից հետո չեն շփոթվի եւ կգտնեն իրենց տեղը: Քաղաքական դաշտում: Տարաբախտ ազգաբնակչությունն էլ պարզ կիմանա, թե ով ում բարեկամն է:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հաշվառվում են բնակարանի կարիք ունեցող փախստականները

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. ՀՀ սոցապնախարարության որոշմամբ, շարունակվում է բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումը, որի համար տեղեկանքները ներկայացվում են հաշվառման պահին փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ: Անհրաժեշտ փաստաթղթերն են տեղեկանք բնակության վայրից եւ ընտանիքի կազմի մասին, տվյալ հասցեում բնակվելու փաստացի ժամանակի մասին: Ինչպես հայտնեցին սոցապնախարարությունում, շահառուները կզրկվեն բնակարան ստանալու հնարավորությունից: Հերթացուցակում լինելը այլ բնակարան ստանալուն չի խանգարի:

Կարիքները լուրջ վտանգ են դարձել մայրաքաղաքի բնակարաններում

ԵՐԵՎԱՆ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Երեւանի տարբեր շրջաններից բնակարաններ կարիքների ներքափանցման վերաբերյալ ահազանգեր են ստացվել հանրապետական ախտահանման կենտրոնում: Գանգատվողները հիմնականում Հարավ-արեւմտյան թաղամասի, Այգեստանի, ինչպես նաեւ բաց տարածություններին հարակից տարածքներում կառուցված շենքերի բնակիչներն են: Կենտրոնի տնօրեն Մելս Պողոսյանը երեւույթի պատճառների, դրա դեմ պայքարի միջոցների վերաբերյալ սպառիչ պատասխան չտվեց: Նա ասաց, որ բնակարաններում կարիքների հայտնվելն իրենց համար անակնկալ է, դրանց դեմ պայքարի ծառայություն դեռեւս չկա, քանի որ դրանք կենցաղային միջատներ չեն եւ միայն այս տարի է, որ սկսել են անհանգստացնել բնակչությանը իրենց վտանգավոր ներկայությամբ: Այնուամենայնիվ, ասաց տնօրենը, բոլոր դիմողներին տրվել է այդ միջատներին վանելու հեքսաքլորին կոչվող դեղամիջոցը, որի քանակությունը հանրապետությունում սահմանափակ է: Փոխարենը առաջարկվում է օգտագործել նաեւ արտասահմանյան միջատասպան աերոզոլներ: Բարեբախտաբար, կարիքների բազմանցումը բնակարաններ մինչ այսօր բժշկական միջադեպերի պատճառ չի դարձել:

ՍՈՉԻԱԼԱԿԱՆ

Միջազգային ուսանողական տոմս նաեւ հայ ուսանողների համար

50-ական թթ. սկզբին Համալսարանական ուսանողական միությունների միջազգային համաժողովներից մեկում հղացավ միջազգային ուսանողական տոմսի կամ վկայականի գաղափարը: Վերջին 30 տարիների ընթացքում այդ տոմսը շուրջ 40 մլն ուսանողների գործուն օգնություն է ցույց տվել ճանապարհորդությունների, արտասահմանյան բուհերում ուսումնասիրության ընթացքում: Նման տոմս տրվում է աշխարհի շուրջ 95 երկրներում, իսկ վերջերս նաեւ Հայաստանում: Դա ամենագրավիչ գնչես, յուրաքանչյուր սոցիալական արտոնություններ 1 տրամադրում ուսանող երիտասարդությանը թե փոխադրամիջոցներից (օդային, երկաթուղային, ավտոբուսային), թե հյուրանոցներից, առհասարակ, սղաստարկման ոլորտի, ինչպես նաեւ մշակութային օջախների (թանգարաններ, թատրոններ եւ այլն) ծառայություններից օգտվելու գործում:

Բավական է ասել, որ Ավստրիայում ուսանող երիտասարդությունն օգտվում է 73-ի հասնող զեղչերի համակարգից, սկսած ուղեւորատոմսերից մինչեւ թատրոններ, թանգարաններ, հյուրանոցներն ու տնտեսարանները: Ընդհանրապես, ողջ աշխարհում լայն տարածում ստացած ուսանողական զեղչերի համակարգը շոշափելիորեն ազդում է երիտասարդության սոցիալական կարգավիճակի, նրանց առողջակերպի ու կենսոլորտի վրա:

Հայաստանի հասարակական կազմակերպություններից՝ «Կրթամշակութային եւ աշխատանքային փոխանակման ծրագրերի միությունը» ձեռնամուխ է եղել այդ համակարգի արմատավորմանը մեզանում: Հենց այդ կարգի միությունն է միջազգային ուսանողական տոմս բաշխող գրասենյակը Հայաստանում:

Այդ ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունը Հայաստանում գործող բազմաթիվ առեւտրական, տրանսպորտային ֆիրմաների ու գործակալությունների, ինչպես նաեւ մշակութային հիմնարկների հետ կնքել է պայմանագրեր, որոնք զանազան զեղչեր են տրամադրել ուսանող երիտասարդությանը: Մերկախոս չլինելու համար նշենք, որ «Ռիվերս» սրճարանը տրամադրել է 25 տոկոս զեղչ, «Պուման» խանութը՝ 10 տոկոս, իսկ «Աերոֆլոտի» «Տուրինֆո» հայտնի ավիագործակալությունը 30 տոկոս զեղչ է սահմանել ուսանող երիտասարդության համար:

Բացի այդ, համաղազասխան պայմանագրեր են կնքվել «Անի» (25 տոկոս), «Դվին» (30 տոկոս) հյուրանոցների հետ, ինչպես նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի (50 տոկոս), ժամանակակից արվեստի թանգարանի (100 տոկոս), Երեւանի կամերային թատրոնի (15 տոկոս), պետական ռուսական դրամատիկական թատրոնի (25 տոկոս) հետ: Մինչեւ տարեվերջ «Միությունը» ծրագրել է այդ սոցիալական զեղչերի կամ արտոնությունների ցուցակը ընդլայնել, ներառելով նաեւ մայրաքաղաքի խոշոր պատանեկան ծամաշրջանառություն ունեցող համալիրները: Թե՞չ խոսք, դրանք զգալիորեն կթեթեւացնեն հայ ուսանողության սոցիալական հոգսերը, հնարավորություն կտան աղագայում ստեղծելու ուսանող երիտասարդության սոցիալական պատասխանատվության ոչ կառավարական, գործուն համակարգ:

Գործնական տեսակետից դրանք, անշուշտ, կնպաստեն նաեւ զբոսաշրջության, առհասարակ, երիտասարդության տարածական շարժունության զարգացմանը, տարբեր երկրների երիտասարդների փոխըմբռնման հնարավորությունների ընդլայնմանն ու ամրապնդմանը: Ուսանող երիտասարդության միջազգային հանրակցությունն իր հետ համագործակցող բոլոր ֆիրմաների, գործակալությունների հասցեները, զեղչերի չափերը տպագրում է հատուկ միջազգային զբոսաշրջային տեղեկատուների մեջ, մտցնում է միջազգային կապի «Ինտերնետ» ցանցի մեջ, որի շնորհիվ շատ հեշտությամբ ընդլայնում է այդ ֆիրմաների միջազգային գովազդի հնարավորությունները:

Ներկայումս Հայաստանում գրանցված 1130 հասարակական կազմակերպություններից 100–150-ը կոչված են պատասխանելու երիտասարդության շահերը: Սակայն դրանցից հազիվ մեկ տասնյակն է լրջորեն զբաղվում ուսանող երիտասարդության սոցիալական մտահոգությունների բավարարման հիմնահարցերով, առավել եւս՝ սոցիալական պատասխանատվության ծրագրերի մշակմամբ: Դրանց թվում երջանիկ բացառություն է կազմում «Կրթամշակութային եւ աշխատանքային ծրագրերի փոխանակման միությունը», որը փորձում է գտնել ուսանող երիտասարդության գործուն սոցիալական օգնության աղտահոմման ոչ ստանդարտ եղանակներ ու մեխանիզմներ:

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ԱԺ պատգամավոր Դավիթ Շահնազարյանի հետ:

Հանդիպումը կկայանա նոյեմբերի 13-ին, ժամը 13.30-ին ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության տարածում (Լիբկնեխտի 14):

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ԱԶԳ

Տեսակետ կառույցներ

Հայոց բանակը կանոնադրային հարաբերությունների հաստատման փուլում

Հարցազրույց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Գագիկ Ջհանգիրյանի հետ

–Դարոն զինվորական դատախազ, խնդրում եմ նախ ասեք, թե որոնք են համարվում զինվորական հանցագործություններ:

–Զինվորական հանցագործություններ հասկացությունը տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 245-րդ հոդվածում, համաձայն որի զինվորական հանցագործություններ են համարվում զինվորական ծառայություն կրելու սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները, որ կատարում են զինծառայողները, ինչպես նաեւ զինապարտները վարժահավաքներ կամ ստուգողական հավաքներ անցնելու ժամանակ: Դրանք նախատեսված են ՀՀ ՔՐ.ՕՐ.-ի 246 հոդվածից 277-ը ներառյալ: Զինվորական դատախազության եւ զինվորական ոստիկանության քննչական ենթակայության տակ է գտնվում նաեւ ընդհանուր քրեական հանցագործությունների քննությունը, որոնք կատարող անձինք զինծառայողներ են:

–Իսկ եթե հանցագործություն է կատարել քաղաքացիական անձը, բայց, ասենք, տուժողը զինծառայող է, այդ դեպքում կատարվածը զինվորակա՞ն հանցագործություն է, թե ոչ:

–Դա զինհանցագործություն չի համարվում: Մեզ ենթակա է այն գործերի նախնական քննությունը, որոնց կատարողը կամ օժանդակողն է զինծառայող: Բացի այդ, եթե հանցագործությունը կատարվել է խմբի կողմից, որի անդամներից մեկը զինծառայող է, ապա քրեական գործի նախաքննությունը եւ հետաքննությունը եւս ենթակա են զինվորական իրավապահ մարմիններին:

–1997 թվականին 1996 թ. համեմատ բանակում մահվան ելքով դեպքերը աճե՞լ են, թե նվազել: Ի՞նչ միտում է նկատվում այս առումով:

–Նախ, ասեմ, որ առայժմ զինվորական դատախազությունը վիճակագրությունը ամփոփում է կիսամյակի եւ տարվա կտրվածքով: Քանի որ 1997-ի երկրորդ կիսամյակը դեռ չի ավարտվել, մենք ունենք միայն առաջին կիսամյակի ամփոփ տվյալները: 1997 թ. առաջին կիսամյակի մահվան ելքերով դեպքերը համեմատենք 1996-ի նույն ժամանակահատվածի դեպքերի հետ: Մահերը, անկախ դրանց իրավական որակումից (նկատի ունեմ, որ այդ որակումը երբեմն նաեւ ճիշտ չի լինում), 1997-ի առաջին կիսամյակում 96-ի առաջին կիսամյակի համեմատ նվազել են 20 տոկոսով: Ես տեսնում եմ 20 տոկոսով, որովհետեւ վերջերս Հելսինկյան կոմիտեի հայտնի հայտարարության մեջ վկայակոչված թվերը խիստ չափազանցված են: Ավելին, հայտարարությունը պնդում է, թե այս տարի օրը մեկ մահվան դեպք է գրանցվել: Դա կնշանակի, որ արդեն տուրջ 300 դեպք է եղել, ինչը, ամենայն պատասխանատվությամբ ասում եմ, իրականությանը բացարձակապես չի համապատասխանում:

–Բայց չէ՞ որ Դուք ասացիք, որ ունեք միայն առաջին կիսամյակի տվյալները: Հնարավո՞ր է, որ Հելսինկյան կոմիտեի ներկայացրած թվերն ի հայտ են եկել վերջին 3-3,5 ամսում:

–Վերջին 3 ամիսներից առաջին 1,5-ում ոչ մի մահվան դեպք տեղի չի ունեցել: Մյուս 1,5 ամսում ունեցել ենք 5 մահվան դեպք:

–Քանի որ անդրադարձաք Հելսինկյան կոմիտեի հայտարարությանը, խնդրում եմ մեկնաբանեք այնտեղ տեղ գտած հետեւյալ միտքը. «Պաշտպանության նախարարության համակարգում գործող զինվորական դատախազությունը հաճախ չի բացահայտում կատարված հանցագործությունները, ինչն էլ նպաստում է բանակում անպատժելիության մթնոլորտի ամրապնդմանը եւ աճեցնում բռնությունների, մասնավորապես, սպանությունների թիվը»:

–Գտնում եմ, որ խիստ կոշտ պնդում է: Նախ նշեմ, ձգտում ենք, որ կատարված բոլոր հանցագործությունները գրանցվեն, արձանագրվեն, քանի որ ծանր հանցագործությունները շատ հաճախ հետեւանք են վեճերի, անախորժությունների, ծառայության սահմանված կարգի մեծ ու փոքր խախտումների, ուստի յուրաքանչյուր նման դեպքով պարտադիր հարուցվում է քրեական գործ եւ կատարվում է քննություն: Չեմ բացառում, որ որոշ դեպքերում, հանրորեն մեծ վտանգավորություն չներկայացնող արարքներով, քրեական գործի հարուցման անբավարարությունից ելնելով, կամ ելնելով մեղքերով մեղմվում է եւ զինծառայողների դատապարտությունը հանձնվում է զորամասերին: Բայց վտանգավոր հանցագործությունների դեպքում անպայման հարուցվում են քրեական գործեր, արվում է ամեն ինչ մեղավորներին հայտնաբերելու եւ պատժելու համար: Չեմ ժխտում նաեւ, որ որոշ դեպքերում մեզ ուղղակի չի հաջողվում բացահայտել հանցագործությունը: Պրակտիկայում լինում են նաեւ այդպիսի դեպքեր:

Հայտարարության մեջ ինչող միտքը, կարծում եմ, առնչվում է հատկապես սպանների թվացյալ անպատժելիությանը, ուստի, ներկայացնեմ որոշ վիճակագրական տվյալներ:

1997 թ. անցած 9 ամիսների համար հենց այդ հարցով ամփոփում ենք կատարել: Այդ ընթացքում սպանների կատարած հանցագործությունների փաստերի առթիվ հարուցվել են 60 քրեական գործեր, որոնցից 42-ը՝ 45 մարդու նկատմամբ, հաստատված մեղադրական եզրակացություններով, արդեն դատարաններ են ուղարկվել: Այդ սպանները մեղադրվում են պատշաճեական դիրքը չարաշահելու, ենթակա զինծառայողներին ծեծելու, ծառայողական պարտականություններին անփույթ վերաբերվելու, թեթեւ ունեցվածքի հափշտակման, կամառ վերցնելու, սպանության, գողության եւ այլ հանցագործությունների մեջ:

–Ստիպված եմ մեկ անգամ եւս անդրադառնալ Հելսինկյան կոմիտեին: Նրա հրավիրած նիստին ներկա էին բանակում մահացածների ծնողներ, որոնք բողոքեցին, թե իրենց զավակների մահվան դեպքերի առթիվ հետաքննություն, նախաքննություն չի կատարվել, կամ այդ դեպքերը ներկայացվել են որպես ինքնասպանություններ: Ասել է թե գործը կարճվել, հարցերը փակվել են: Ի՞նչ կասեք սրա մասին:

–Ցավում եմ, բայց տեղյակ չեմ, թե, հատկապես, զոհված ո՞ր զինծառայողների ծնողներն են ներկա եղել այդ հանդիպմանը, եւ չգիտեմ, արդյոք այդ ծնողները զինդատախազություն եւ անձամբ ինձ դիմե՞լ են, թե՞ ոչ: Դիմում եմ բոլոր այն ծնողներին, ովքեր դժգոհություններ ունեն քրեական գործերի քննության առնչությամբ, դիմեն ինձ: Հավատացնում եմ, որ անձամբ կընդունեմ բոլորին, կփորձեմ պարզել այդ բոլոր դեպքերի եւ հանցագործությունների մանրամասները: Ցավոք, լինում են դեպքեր, երբ զինվորը զոհվում է թշնամու գնդակից, եւ այս դեպքում, իրոք, մեղավորին գտնել հնարավոր չէ:

–Մեր զինծառայողները հաճախ են զոհվում, այսպես կոչված, դիպուկահարային (սնայպերային) պատերազմում: Այդ դեպքերում քրեական գործեր հարուցվո՞ւմ են:

–Բոլոր դեպքերում, եթե կա դիակ, զոհված զինծառայող, ապա գործող օրենսդրությունը պահանջում է քրեական գործի հարուցում: Մյուս կողմից, մեր բանակը սահմաններում մարտական հերթապահություն է կատարում, եւ հանգամանքների բերումով, զինվորները երբեմն զոհ են դառնում դիպուկահարի գնդակից: Սա թշնամու գնդակից զոհվելու մասնավոր դեպք է, եւ հնարավոր չէ հայտնաբերել մեղավորին:

Հաճախ հետեւյալ պարադոքսալ վիճակի առաջ ենք կանգնում թշնամու տեսածրային գնդակի կրակոցից զոհվում է զինվորը, նրա հագուստի եւ մաշկի վրա վառոդի հետքեր են մնում, քանի որ նման գնդակները վառվելով են թռչում: Իսկ մեզ մինչեւ հիմա հայտնի էր, որ վառոդի հետք է թողնում մոտ տարածությունից արձակված գնդակը: Եվ ահա, փորձագետը շեշտում է, որ կրակոցը մոտիկից է, քանի որ հագուստի վրա չայրված վառոդի հետքեր կան, իսկ ականատես-վկաները պնդում են, որ կրակոցը եղել է թշնամու դիրքերից: Այսինքն, տեսածրային գնդակով զոհի դեպքում դժվար է լինում փորձագետի եզրակացությունը համադրել վկայի ցուցմունքին եւ ճիշտ գնահատական տալ դեպքին: Այս պայմաններում ծնողը, բնականաբար, հակված է պնդելու, որ իր զավակին սպանել են յուրայինները:

–Ինչպիսի՞ հանցագործություններ էին բնորոշ մեր բանակին 1992-ին, երբ նոր էր կազմավորվում, վճռորոշ 1994-ին եւ հիմա՝ 1997-ին:

–Ըստ էության, 1992-93 թթ. հանցագործությունների վիճակագրություն չի կատարվել: Զինվորական դատախազությունը ծեւավորվել է 1992 թվականի վերջին եւ առաջին զինհաշվեսվությունը՝ շատ թե քիչ ամփոփ, կատարվել է 1994-ին: Կարծում եմ, որ 1994-97 թթ. զինհանցագործությունները որակական փոփոխություն չեն կրել: Պարզապես ներկայումս զինոստիկանությունը եւ զինդատախազությունն ավելի շատ ժամանակ եւ հնարավորություններ ունեն պայքարելու նաեւ տնտեսական բնույթի հանցագործությունների դեմ: Ինչ վերաբերում է բանակում տիրող կարգուկանոնին, ապա բանակն արդեն կայացել է եւ այժմ կարգուկանոնի հաստատման, ոչ կանոնադրային հարաբերությունների բացառման, կատարվող հանցագործությունների կրճատման փուլում է:

–Բանակում կատարվող հանցագործություններ եւ «դեդովշինա» հասկացությունները սերտորեն կապված են: Ի՞նչ է արվում «դեդովշինան» հայոց բանակում վերացնելու համար: Չէ՞ որ համարյա բոլոր նորակոչիկները բողոքում են ստորացուցիչ պայմաններում հայտնվելուց:

–«Դեդովշինան» կա եւ, իհարկե, դատապարտելի երեւույթ է: Դա, կարծես, ժառանգաբար խորհրդային բանակից անցել է հայկական բանակ: Բայց «դեդովշինա» ասածը համատարած չէ, այլ առկա է այն զորամասերում, որոնց հրամանատարները թույլ են եւ չեն կարողանում վերահսկել իրավիճակը: Միաժամանակ նրանց «ձեռնտու» է ունենալ հին զինծառայողներ, որոնք հսկեն իրավիճակը: Դա հակասում է մեր բանակի ներքին ծառայության կանոններին եւ այսօր խիստ պայքար է մղվում դրա դեմ, հանգի կատարվող շատ հանցագործություններ, իրոք, «դեդովշինայի» հետեւանք են: Երեւույթից ձերբազատվելն օրերի գործ չէ: Այն արդեն հոգեբանություն է դարձել, ընդ որում, բավականին պահպանողական: Քանի որ նորակոչիկը հանդիպում է հների ոչ բարյացակամ վերաբերմունքի, ապա հայրիկ տարիներ էլ նման վարքագիծ է դրսեւորում նոր զորակոչվածների նկատմամբ: Այստեղ պահանջվում է բոլոր զինծառայողների, հրամանատարների եւ անպայման ծնողների ջանքերի զուգակցում:

–Արվամոլություն կա՞ մեր բանակում:

–Արվամոլություն չարիքը, որպես երեւույթ մեր բանակում չկա: Անցյալ տարի գրանցվել է այդպիսի մեկ դեպք: Ընդհանրապես, արվամոլությունը եւ անառակաբարո գործողությունները, ինչպես բնորոշ չեն մեր ազգին, այնպես էլ բանակին:

–Նախկինում կարճված, կասեցված գործերին անդրադարձներ կատարե՞լ եք եւ ի՞նչ արդյունքներ ունեք:

–Չորս ամիս է, ինչ ես զինդատախազ եմ: Այս ընթացքում վերանայել եմ բազմաթիվ քրեական գործերի կարճման, կասեցման որոշումներ, մի շարք գործերով կատարվում են նոր նախաքննություններ, վերանայվել են նաեւ նյութերով քրեական գործի մերժման մասին որոշումներ: Ուշադիր ենք ոչ միայն այժմ կատարվող, այլեւ նախկինում կատարված հանցագործությունների նկատմամբ: Շատ անգամ կարճված, կասեցված գործերին անդրադառնելու հիմք են հանդիսանում ծնողների բողոքները ու գանգատները:

–Ձեր կողմից զորամասերում հսկվո՞ւմ են սանիտարական, սննդի պայմանները կամ ֆինանսական կարգապահությունը:

–Սահմանադրության 103-րդ հոդվածը լիազորում է դատախազությանը, թե պետության շահի պաշտպանության հայց հարուցել դատարան, եւ թե քրեական հետապնդում հարուցել, եւ քանի որ բանակը պետության կողմից է ֆինանսավորվում, հետեւաբար ֆինանսական կարգապահության, սննդի, դրա որակի եւ մեր այլ ստուգումները մեկնաբանում ենք որպես պետության շահի պաշտպանության լիազորության իրականացում: Եթե ստուգումներով պարզում ենք, որ նշված ոլորտներում հափշտակություն է կատարվել, ապա հարուցում ենք քրեական գործեր: Ինչ վերաբերում է զորամասերում վատ սանիտարական պայմաններին, ապա ստուգումներից հետո ահազանգում ենք ՊՆ բուժծառայություն եւ միջնորդում վերացնելու թերությունները:

–Հաճախին զինվորական ծառայության մեջ են հայտնվում հիվանդ երեխաներ: Ովքե՞ր են մեղավորները, եւ ինչպե՞ս է լուծվում հիվանդների հարցը:

–Հաճախին համաձայն չեմ, լինում են նաեւ սխալ զորակոչի դեպքեր, երբ զորակոչվում են առողջական վիճակի բերումով զինվորական ծառայությանը ոչ պիտանի զինակոչիկներ: Յուրաքանչյուր այդպիսի ահազանգի դեպքում զինդատախազությունը նշանակում է ռազմաբժշկական կրկնակի փորձաքննություն պարզելու զինվորական ծառայությանը զինծառայողի պիտանելիության հարցը: Ստանալով համապատասխան եզրակացություն, մենք միջնորդում ենք պաշտպանության նախարարությանը վաղաժամկետ զորացրել այդպիսի զինծառայողին եւ հանելով մեղավոր պատասխանատու անձանց (բժիշկներ, զինկոմիսարներ) պատասխանատվության հարցը: Առանձին դեպքերում, երբ դա հանգեցրել է ծանր հետեւանքների, դրվում է մեղավոր պատասխանատուին քրեական պատասխանատվության կանչելու հարցը:

–Ինչո՞վ է աջակցում զինդատախազությունն արդեն սկսված աշնանային զորակոչին:

–Զորակոչի օրերին զինդատախազության ներկայացուցիչները գտնվում են հավաքակայանում եւ իրավական օգնություն ցույց տալիս զորակոչի կազմակերպման եւ իրականացման ողջ ընթացքում:

Բացի այդ, ես մի քանի անգամ դիմել եմ զինծառայությունը լված զինծառայողներին, կոչ անելով գալ, ներկայանալ զինվորական կոմիսարիատներ եւ գնալ ծառայության:

Ես, որպես զինդատախազ, խոստանում եմ, որ զինծառայությունը լված այն զինծառայողները, որոնք այս աշնանային զորակոչի ընթացքում կգան, կներկայանան զինկոմիսարիատներ կամ զինդատախազություն եւ կգնան ծառայությունը շարունակելու, նրանց նկատմամբ հարուցված քրեական գործերը կկարճվեն, նրանք չեն դատվի եւ չեն դատապարտվի:

–Ե՞րբ կարող ենք առավել բաց եւ ամփոփ տվյալներ ստանալ 1997 թվականի հանցագործությունների մասին:

–1997 թ. տարեկան արդյունքների ամփոփումից հետո 1998-ի սկզբին, արդեն ամբողջ ծավալով այս տարվա արդյունքները կհամեմատենք 96-ի արդյունքների հետ եւ կտեսնենք առաջընթացն ու հետընթացը: Կտեսնենք նաեւ, թե ինչպիսի հանցագործություններն են աճել, որոնք նվազել:

ԹԱՄԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ
Արմենպրես

ԱՇԽ

Միջազգային

Ինչ է փնտրում Վատիկանը Ռուսաստանում

Սեպտեմբերի 19-ին Պետական դումայի ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց «Խղճի ազատության եւ կրոնական միավորումների մասին» օրենքը՝ ելցինի առաջարկած խմբագրությամբ: Համաձայն նոր օրենքի, բոլոր կրոնական միավորումները բաժանվում են երկու կարգի. կրոնական կազմակերպություն եւ կրոնական խումբ: Բոլոր միավորումները պարտավոր են մինչեւ 1999 թ. վերջը վերագրանցվել: Առաջին կարգ (կրոնական կազմակերպություն) ստանալու համար գրանցվողները պետք է ապացուցեն Ռուսաստանում իրենց մշտական ներկայությունը վերջին 15 տարիներին: Այն կազմակերպությունները, որոնք համոզիչ ապացույցներ չեն ունենա, կստանան երկրորդ կարգ՝ կրոնական խումբ: Դա նշանակում է, որ պարտավոր են առաջիկա 15 տարիներին ամեն տարի հաստատել իրենց ներկայությունը Ռուսաստանում:

Կրոնական խմբերը զրկվում են հարկային արտոնությունից, տեղեկատվություն տարածելուց, երեխաների կրոնական ուսուցումից, չեն կարող բնակատեղի գնել կամ վարձակալել, արտասահմանից հավատացյալներ հրավիրել եւ այլն: Օրենքը ելցինյան տարբերակում եւս նախապատվությունը տալիս է ավանդական կրոններին, առաջին հերթին ուղղափառ եկեղեցուն, այնուհետեւ իսլամին, բուդդիզմին, եբրայականությանը: Իհարկե, օրենքի սկզբնական՝ դումայական տարբերակը շատ ավելի նպատակային էր ռուս ժողովրդի հոգեւոր միասնության լիակատար ապահովման տեսակետից, քանի որ հակառակ դեպքում «կհանգեցնի Ռուսաստանի հոգեւոր հետագա անկայունությանը», հայտարարել էր պատրիարք Ալեքսի Բ-ն: Նա արեւմտյան մեդիաներներին հույս էր Ռուսաստան շատ դիպուկ համեմատեց ՆԱՏՕ-ի արեւելքաշարժման հետ: Չգալով վանքը, Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդը, անհանգստացած Ռուսաստանում կաթոլիկ եկեղեցու ճակատագրով, հայտարարեց, թե այդ օրենքը սպառնալիք է եկեղեցու հետագա գոյությանը Ռուսաստանում: Ինչ խոսք, Վատիկանի հայտարարությունը սովորական դեմագոգիա էր, Ռուսաստանն էլ նոր չէր ճանաչելու Վատիկանին: Կոմունիստական աթեիզմի 70 տարվա ջախջախիչ հարվածներից հետո Հռոմի կաթոլիկ եկեղեցին այսօր ուշքի է եկել, ճիգ է անում հաստատվել Ռուսաստանում: Կարծում ենք, բոլորի համար էլ պարզ է, որ այդ ձեռնարկը խիստ քաղաքական ասատ ունի, քանի որ Պետրոս առաքյալի երկրային «փոխանորդները» բոլոր դարերում հաճախ ոչ այնքան աստվածաբաններ են եղել, որքան քաղաքագետներ:

Ակտիվ մասնակցությունը միջազգային աշխարհիկ գործերին երկրորդական է դարձնում այն գործունեությունը, որի համար կոչված է այդ եկեղեցին: Թվում է, դատապարտելի ոչինչ չկա դրա մեջ, մանավանդ եթե ուղղված է խաղաղությանը, զանգվածների սոցիալական խնդիրների լուծմանը: Փաստերը, սակայն այլ բան են պնդում: Քրիստոսի խաչը բարձրացրած՝ քաղաքական գործարքների մեջ մտնելը, կատերը ագրեսիվ, վտանգավոր շրջանակների հետ անհարիր պետք է լինեին կրոնական այնպիսի կառույցի համար, ինչպիսին Վատիկանի եկեղեցին է:

Պիոս XI պապը (1923-1939) բազմիցս հանդես է եկել Խորհրդային Միության դեմ խաչակրաց արշավանքի նախաձեռնողի դերով: Որոշ աղբյուրներ պնդում են, որ Վատիկանը հրահանգել է գերմանական եպիսկոպոսությանը աջակցել Հիտլերին իշխանության գլուխ գալու: Սա հասկանալի կլինի, եթե փաստենք, որ Խորհրդային Միության վրա հիտլերյան հարձակումից մեկ շաբաթ անց, Պիոս XII-ը հանդես եկավ ճառով, ուր Իտալիայի մասնակցությունը պատերազմին համարեց «աստվածային առաքելություն»:

Պատերազմի բեկումից՝ 1943 թ. հետո պապը տագնապած ինչ-ինչ քայլեր ձեռնարկեց երրորդ ռայխը փրկելու նպատակով: Կարդինալ Սպելմանը ԱՄՆ-ից շատ հոռմ ժամանելով, մամոնային դիվանագիտություն ծավալեց պապի եւ գերմանական դեսպանի միջեւ: Նա հանդիպեց նաեւ Ռիբենտրոպի հետ: Չուր հույսեր: «Ժողովուրդների հայրը» երկու կողմերին էլ ոչ մի հույս չթողեց:

Մանկամտություն կլինեք կարծել, որ երկու համաշխարհային պատերազմների եւ նրանց միջեւ ընկած փոքրկալի իրադարձությունների ակտիվ մասնակից Վատիկանը զերծ է մնացել եւ չի համագործակցել այլ պետությունների հատուկ ծառայությունների հետ: Բնականաբար, պատերազմից հետո Հռոմի կաթոլիկ եկեղեցին պետք է արժանանար ուժեղ պետությունների հատուկ ծառայությունների ուշադրությանը: «ԱՄՆ-ի համար ծայրահեղ անհրաժեշտ է օգտագործել Վատիկանի ազդեցությունը եվրոպական գործերում», գրեց «Վաշինգտոն փոստը»: Շատ լեզուներ խոսում են այդ հատուկ ծառայությունների բոլոր ցանկությունների ունկնդրման եւ ըստ հնարավորի կատարման մասին, քանի որ «այդ ցանկությունները ուղեկցվում են զգալի գումարների փոխանցումով Վատիկանին»: 70-ական թվականներին կոմունիստական աթեիզմից պարտություն-պարտության հետեւից կրելով Վատիկանը ստիպված էր համակերպվել «խաղաղ գոյակցության» սկզբունքին, ընդ որում, երբ զգաց, որ հողը երերում է իր ոտքերի տակ եւ որ Խորհրդային Միությունը գաղափարական պայքարի հզոր ուժ է, արտաքուստ դադարեցրեց խաչակրաց արշավանքը նրա դեմ: Վատիկանին հատուկ են սովորական պետությանը բնորոշ բոլոր կառույցները, այդ թվում եւ գաղտնի ծառայությունների համապատասխան ցանց, իհարկե, նաեւ կապ մաֆիական կառույցների հետ: Այն էլ ասենք, որ եթե հետախուզությունը (իմա՝ լրտեսությունը) սովորական մարդկային չափանիշներով անբարոյական է, ապա ինչպե՞ս որակել այդ երեւույթը, որ իրագործում է կրոնական ծանրակշիռ կառույցը: Իրագործելով քայքայիչ աշխատանք, քաղաքական դավեր, ինտրիգներ եւ վերջապես կրոնական մարդասպանություններ: Ի վերջո, հասավ պատմության այն պահը, երբ ՍՍՀՄ-ը փլուզվեց: Ժողովրդական լայն զանգվածների սոցիալական վիճակը ՍՍՀՄ-ի նախկին ողջ տարածքում կտրուկ ծանրացավ: Աղքատությունը համընդհանուր դարձավ, պարտադրելով կրոնական մարդասիրի համար: Այս պայմաններում Հռոմի կաթոլիկ եկեղեցին լայն ծակատով ներխուժեց Ռուսաստանի սահմաններից ներս: Խուժեց նաեւ աղանդավորական խմբերի խայտաբղետ տեսակներին: Ի պատիվ Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու, նա ակտիվ պայքար ծավալեց ներխուժողների վտանգավոր նկրտումների դեմ: Խնդիրը բավական բարդ է: Ներկայումս Ռուսաստանում գործում են 3500 կրոնական կազմակերպություններ, խմբեր: Արեւմուտքն ունի մի դրոշ, որ կոչվում է դեմոկրատիա... խղճի ազատություն, մարդու իրավունքներ: Որտեղ ձեռնտու է թափահարում է, պահանջում, հուզվում, սպառնում. որտեղ ոչ՝ ականջի հետեւ գցում: Այդ դրոշի պատրվակի տակ էլ ծավալվում է հարձակումը ռուս ժողովրդի հոգեւոր միասնության դեմ: Դումայի նախագծի ընդունումից հետո արեւմուտքն աղմկեց: Ամերիկյան սենատոր Գորդոն Սմիթը պահանջեց պատժել Ռուսաստանին, կրճատելով նրա օգնության ֆոնդը 200 մլն դոլարով: Պարզվում է, որ նա ժամանակին կաթոլիկ միսիոներ է եղել Հնդկաչինում: Հավանաբար Սմիթը գիտի, որ իր նախնիներից այն 600 հոգին, որ առաջին անգամ XVII դարի սկզբին ոտք դրին ամերիկյան հողին եւ ջանում էին ստեղծել իշխանություն, կառավարող մարմին, առաջին պայմաններից մեկը, որ առաջ քաշեցին, միասնական կրոնի պարտադիր պահանջն էր: Դա պետք է նպաստեր պետության կայացմանը, ժողովրդի համախմբմանը, բոլոր իրադարձություններում միասնաբար գործելու ծայրահեղ անհրաժեշտությանը: Նման հարցադրումն Արեւմուտքն այսօր չի ցանկանում ունկնդրել: Դա նրան ձեռնտու չէ: Զարմանալի չէ, որ բոլոր կրոնադավանաբանական խմբերը եւս բողոքի ալիք բարձրացրին Մոսկվայի պատրիարքության դեմ, ով, նրանց կարծիքով, «սովոր չէ աղրել պլյուրալիզմի աշխարհայացքի պայմաններում», որ «վերջ է տրված կրոնական ազատությանը»:

Եթե փորձենք բացել մեջբերումների փակագծերը, ապա պարզ կդառնա, որ ընդունված օրենքը մի արգելափակոց է կրոնական խմբերի դեմ, որոնց գործունեության նպատակը մեկ միասնական, որոշիչ կրոնական հիմք ունեցող ժողովրդի պառակտումն է, ինչն անկասկած պետք է դիտվի Ռուսաստանի ազգային անվտանգության հարցերի համակարգում: Եվ վերջապես այն միտքը, որ հուսահատ նյարդայնության պահին դուրս է մղել բողոքողների շուրթերից, թե «օրենքն իշխանության այն ներկայացուցիչների օգտին է, որոնք երազում են միասնական ազգային գաղափարախոսության մասին եւ որոնց կարծիքով ուղղափառությունը, ժողովրդայնությունը պետականության հետ մեկտեղ ինտեգրվում է այդ գաղափարախոսությանը»:

Թեեւ օրենքից դժգոհները վերը բերված միտքը ներկայացնում են որպես մեղադրանք, այնուամենայնիվ ակամա հաստատում են ազգային գաղափարախոսության, Ռուս ուղղափառ եկեղեցու եւ պետության միասնականության անհրաժեշտությունը, միաժամանակ բացահայտելով «կրոնադավանաբանական ՆԱՏՕ-ի» իսկական նպատակը:

Ինչ ասվեց Ռուսաստանի եւ Վատիկանի փոխհարաբերությունների մասին, կարելի է կրկնել Հայաստանի, Հայ առաքելական եկեղեցու եւ Վատիկանի փոխհարաբերությունների առումով՝ մի էական տարբերությամբ. Ռուս ուղղափառ եկեղեցին (նաեւ Վրաց եկեղեցին), ռուսական պետության ղեկավար շրջանները այսօր հասկանում են եւ փորձում դիմագրավել առաջացող վտանգը: Հակառակ դրան, տարակուսանք ու զայրույթ է հարուցում էջմիածնի դիրքորոշումը, որն ընդառաջ է գնում Վատիկանին, միավորման ջանքեր գործադրում, որն էլ, իհարկե, ողողվում է էկումենիկ շարժման զգեստավորմամբ: Ազգային ժողովի ընդունած «Կրոնի եւ կրոնական կազմակերպությունների մասին» խղճուկ օրենքը բացահայտ հրավեր է օտար կրոնադավանական խմբերին՝ քայքայիչ գործունեություն ծավալելու Հայաստանում:

Ռուսաստանի նման հսկա պետությունը զգուշանում է կրոնական արեւմտյան ներխուժումների վտանգից. մենք մի բուռ ժողովուրդ, չենք ուզում (չենք ուզո՞ւմ) զգուշանալ Վատիկանի եւ նրա գաղտնի դաշնակիցների հետագա ծրագրերից:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂԱԼՅԱՆ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

«Իրանին մեկուսացնելու ԱՄՆ-ի ջանքերը մեկուսացնում են հենց իրեն»

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Իրանին եւ Իրաքին մեկուսացնելու ԱՄՆ-ի քաղաքականությունը ձախողվում է՝ պնդում է ամերիկյան հայտնի վերլուծաբան Սթիվեն Էրլանգերը «Նյու Յորք թայմզ» թերթում: Ըստ նրա, Իրաքի հարցում ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան մի կերպ պահպանվում է լոկ այն պատճառով, որ Սադդամ Հուսեյնի կողմից ՄԱԿ-ին նետած մարտահրավերները ժամանակավորապես միասնություն են ստեղծում Իրաքի դեմ, իսկ Իրանի հարցում, Էրլանգերի կարծիքով, ԱՄՆ-ի տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը ձախողվում է: Ավելին կացությունը Իրանում շատ ավելի վտանգավոր է հեռանկարային իմաստով: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, ՄԱԿ-ը Իրանում որեւէ լուրջ դիտորդական առաքելություն չունի, որպեսզի ստուգի, թե ինչ ծրագրեր են իրականացվում զանգվածային բնաջնջման զենք ստեղծելու համար, իսկ Իրանում նման ծրագրեր իրագործվում են: Մասնավորապես, ամերիկյան մի շարք պատասխանատուներ համոզված են, որ Իրանը փորձում է այնպիսի հրթիռներ ստեղծել, որոնք ունակ են հարվածելու Իսրայելին, Սաուդյան Արաբիային եւ եվրոպական երկրներին: Իրանին մեկուսացնելու քաղաքականությունը աշխարհի մյուս երկրներին պարտադրելու ԱՄՆ-ի ջանքերը լուրջ տարաձայնություններ են առաջացրել նույնիսկ ԱՄՆ-ի ամենամոտ դաշնակիցների մեջ, որոնք հենադատաբար են վերաբերվում Իրանի հետ զորձարար կապեր հաստատող օտարերկրյա ընկերությունների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու ԱՄՆ-ի փորձերին: Եվրամիությունը սպառնացել է պատասխան պատժամիջոցներ կիրառել ամերիկյան ընկերությունների նկատմամբ, եթե ԱՄՆ-ն փորձի նման քայլի դիմել: Առայժմ ԱՄՆ-ն այդպիսի փորձ չի ձեռնարկել, թեեւ առնվազն 6 արեւմտյան ընկերություններ արդեն խոշոր գործարքներ են կնքել Իրանի հետ: «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում նորանկախ երկրների հարցերով ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հատուկ խորհրդական Սեսանովիչը հայտարարել է, որ անցած շաբաթ հանդիպել է միջինասիական երկրների եւ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հետ, նրանց հորդորելով ձեռնպահ մնալ Իրանի տարածքով խողովակաշարեր կառուցելու ծրագրերից ու մտածել այլընտրանքային ուղիների մասին: Եվրոպական դիվանագետների կարծիքով, այս առաքելությունները որեւէ հաջողության չեն հասնի: Ավելին Իրանին մեկուսացնելու ջանքերն ավելի շատ մեկուսացնում են ԱՄՆ-ին: Միեւնույն ժամանակ, տնտեսական պատժամիջոցներից վնասվող Իրանը չի շտապում հրաժարվել զանգվածային բնաջնջման զենքեր ստեղծելու իր ծրագրերից: Եվրոպացիների կարծիքով, պատժամիջոցներով անհնարին է փոխել Իրանի վարքագիծը, եւ միայն իրանյան քաղաքականության վերափոխումը կարող է նման փոփոխություններ մտցնել այդ հարցում, հետեւաբար անհրաժեշտ է քաջալերել այդ երկրի չափավորական քաղաքականությունը եւ ամեն կերպ աջակցել Իրանի նորընտիր նախագահին: «Իրանը 3000 տարվա պատմություն ունեցող բարդ երկիր է, ուր իրական ինտելեկտուալ կյանք կա: Իրանն Իրաքից այդ առումով ավելի վտանգավոր է, բայց մենք կարող ենք ներազդել Իրանի վրա, եթե երկխոսություն ստանձնենք նրա հետ», ընդգծել է եվրոպացի մի դիվանագետ:

Թուրքիան պետք է իր զորքերը դուրս բերի Իրաքյան Քրդստանից, պահանջում է Մոսկվան

ՄՈՍԿՎԱ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիան պետք է իր զորքերն անհապաղ դուրս բերի իմքնիշխան պետության՝ Իրաքի տարածքից, խստիվ հարգի նրա տարածքային ամբողջականությունն ու միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այսպիսի հայտարարություն է արել Ռուսաստանի արտգործնախարարության տեղեկատվության ու մամուլի դեպարտամենտի տնօրեն Գենադի Տարասովը՝ Իրաքյան Քրդստանում Անկարայի ռազմական միջամտության սասկացման կապակցությամբ:

Դատելով եղած տեղեկությունից՝ խոսքն Իրաքի հյուսիսում բավականին լայնածավալ ռազմական գործողության մասին է, նշել է Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատու ներկայացուցիչը: «Իրաքին առնչված իրադրության լուրջ սրվելու ֆոնի վրա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում այդ նյութի քննարկումները, միջդրդական առճակատման նոր բռնկումը եւ Թուրքիայի հերթական ներխուժումն այդ երկրի մնացին փոքր-ինչ սպասելի»: Այս անգամ այդ գործողությունը ձեռնարկվել է բնավ էլ ոչ Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայիններին հետապնդելու կապակցությամբ: Այս անգամ թուրքական զինված ուժերն «ուղղակի ներքաշվել են Իրաքի քրդական խմբավորումների հակամարտության մեջ», նշել է դիվանագետը:

«Նման գործողությունները հղի են վտանգավոր հետեւանքներով եւ կարող են խորացնել Իրաքի շուրջ առանց այդ էլ ճիկացած կացությունը: Հուսով ենք, որ այդ տարածաշրջանի բոլոր պետություններն անհրաժեշտ զսպվածություն կդրսեւորեն: Բաղդադից պահանջելով անվերապահորեն կատարել Անվտանգության խորհրդի բանաձեւերը, համաշխարհային հանրակցությունը միեւնույն ժամանակ կոչված է աջակցել եւ կիրառել միջազգային օրինականության սկզբունքները բուն Իրաքի նկատմամբ», հայտարարել է Գենադի Տարասովը:

Չինաստանն անհանգստացած է ճապոնա-ամերիկյան ռազմական համագործակցությունից

ՏՈԿԻՈ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Չինաստանի վարչապետ Լի Պենը ճապոնիայի վարչապետի հետ բանակցություններ անցկացնելու նպատակով ժամանել է Տոկիո, որտեղ նոյեմբերի 12-ին հանդիպումներ է ունեցել նաեւ երկրի նախկին ղեկավարների եւ ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ: Չինաստանը մտադիր է պարզել տարածաշրջանի պատասխանատության նոր պլանների վերաբերյալ ԱՄՆ-ի կողմից արված ակնարկների էությունը: Ինչպես հաղորդում է DPA գործակալությունը, Լի Պենը հանդիպել է նաեւ ճապոնիայի հինգ նախկին վարչապետների հետ: Հանդիպումների ժամանակ նա Չինաստանի անհանգստությունն է հայտնել ճապոնիայի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմական համագործակցության կապակցությամբ եւ պնդել, որ ճապոնիան ու Չինաստանը պետք է ջանքեր գործադրեն այդ հարցում փոխադարձ համաձայնության գալու համար:

ԱԶԳ

Մշակույթ

Հրանտ Միրզոյանի գունաշխարհը

Վերջին տարիներին արդի գեղանկարչության մեջ մեծ տարածում գտած վերացական նկարչությունն այլեւս անսովոր չի դիտվում. այն դարձել է ընդունելի արվեստագետների կողմից: Դիտողի աչքը վարժվել է տեսնել անտեսանելին, ընկալել անընկալելին:

Կյանքն է թելադրում արվեստագետի անցնելիք ուղին, եւ գեղանկարիչ, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի ու Երեւանի գեղարվեստի ինստիտուտի շրջանավարտ Հրանտ Միրզոյանի համար այդ ուղին զատորոշվում, բացվում է նրա առաջ նկար առ նկար, ցուցահանդեսից ցուցահանդես: Ո՞րն է իր կյանքում ունեցած լավագույն ցուցահանդեսը, երեւի ինքն էլ չի կարող պատասխանել, քանի որ յուրաքանչյուրն իր հետ մի նոր ճանաչում է բերել, նոր ձեռքբերումներ: Այնուամենայնիվ, տասնհինգ տարին հիչ չէ, եթե նկատի ունենանք, որ բոլոր այդ տարիները հագեցած են եղել ստեղծագործ ենչով: Ուսանողական տարիներից սկսած պատկերել է բնանկարներ, կոմպոզիցիոն աշխատանքներ, որոնք այն շրջանում հոգեհարազատ էին իրեն: Հետո, անցնող տարիներին ու նկարչությանը զուգընթաց, իր մտապատկերում, ներաշխարհում զգաց վերացարկված պատկերների, կտավների գոյությունը: Նրանք կային իր մտքում, հոգում, տեսիլքներում եւ արտահայտվեցին անմիջապես, քանի որ ինքնաբուխ էին: Չնայած, երբեմն ինքն էլ չիմանալով ինչու մղվում է դեպի դասական նկարչությունը պարզ [illegible] է, որ ստեղծվիքի [illegible] տարածություն: ինչ ոճով աշխատել: Նկարը կա՝ գեղեցիկ՝ նկարը էլ կա վերացական: Իշխողը տրամադրությունն է, իսկ անկեղծ լինելու համար պետք է ասել, որ Հրանտ Միրզոյան գեղանկարիչն, անկասկած, տրամադրության մարդ է: «Տեսիլ» կտավն իր էությամբ հուշում է դիտողին, որ պահն արդված է, եւ նկարիչն իր միջով, իր ներաշխարհով անցկացնելով, արվեստասերին է ներկայացրել այն արդումը, որը հոգեհարազատ է արվեստի լեզուն հասկացող մարդուն: Իսկ նման հարազատություն ներարկող կտավները շատ են նրա գործերում:

Հրանտը ծնվել ու աղրել է Գյումրիում, նկարչի ընտանիքում եւ նրան անչափ հարազատ են Գյումրվա պատկերները: Դրանք հինավուրց քաղաքի նեղլիկ փողոցներն են, փայտե դարպասներով տները, որոնց մի մասն այսօր դեռ կա, արդում է, հազար ափսոս, չկա Ամենափրկիչը, որ փլվեց ավերիչ երկրաշարժից:

Առաջին անհատական ցուցահանդեսը բացվեց Երեւանի արդի արվեստի թանգարանում, 1989 թվին: Առաջին անգամ հայ արվեստասերը հնարավորություն ունեցավ

ամբողջական պատկերացում կազմելու Հրանտ Միրզոյան նկարչի մասին, չնայած սկսած 1983 թվականից, մասնակցել է հանրապետությունում եւ արտասահմանյան մի շարք երկրներում բացված հայ գեղանկարիչների խմբակային ցուցահանդեսներին: Երիտասարդական ցուցահանդես Ֆինլանդիայում (1983) Կանադայում Ֆրանսիայում (1991) Շվեդիայում Լիբանանում Սնգլիայում (1993) Բելգիայում (1995) եւ վերջապես 1994-ին Չեխիայում, Պրահա քաղաքի «Բիլո ռոգե» պատկերասրահում բացված անհատական ցուցահանդեսը, որը նոր որակ էր իր արվեստում եւ իր, եւ դիտողների բնորոշմամբ:

- Հրանտ, որքան ինձ հայտնի է, Չեխիայում հայ համայնք չկա, ովքե՞ր էին քո ցուցահանդեսի այցելուները եւ ի՞նչ տպավորությամբ էին հեռանում սրահից:

- Հնարավոր է, որ հատուկենտ հայեր լինեն, ո՞ր երկրում հայ չկա, բայց ամբողջական համայնք գոյություն չունի: Իմ ցուցահանդես այցելում էին չեխեր, սլովակներ, ֆրանսիացիներ, մարդիկ, որոնց հարազատ էր դառնում իմ նկարչությունը: Որքան հասկացա, ժամանակակից եվրոպացուն ավելի շատ հրապուրում է ֆիգուրատիվ աբստրակցիան: Ինչով ես զբաղված եմ:

Ինչպես ինքն է արտահայտվում, Հրանտի վերացական մտածողությանն ու ստեղծագործություններին հատուկ է ֆիգուրների ներկայությունը: Նրանք ոչ ռեալ են իրական աչքունքով, ոչ էլ հորինվածային: Այդ ֆիգուրները մարմնաձեւեր են ստանում տարբեր գունեւանգներով, նուրբ վրձնահարվածներով: «Մեղեդի», «Հայտնություն», «Տիրամայր» կտավներով նա արվեստասերին է հանձնում իր ներքին զգացողությունները, կյանքի, արվեստի, մարդու հանդեպ ունեցած հավատն ու վստահությունը: Վաղ շրջանի ստեղծած դիմանկարների, բնանկարների կողքին այսօր ավելի հնչում են նրա կոմպոզիցիոն աշխատանքները: Եվ այն, որ վերնագրերը շատ անգամ պայմանական են եւ որն ընդունված է նկարիչների համար, Հրանտի գործերում երբեմն դրանք դառնում են բանալի դիտողի միտքն ու երեւակայությունը բացելու, անտեսանելին տեսնելու մղումով: Նրա կտավներում պարզորոշ արտահայտվում են ֆիգուրների դեմքերը, եւ չնայած ամբողջովին վերացական միջավայրում են, սակայն դիտողին են փոխանցում կոնկրետ մարդու հմայքը, վերաբերմունքը, տրամադրությունը: Հրանտ Միրզոյանի գեղանկարչական աշխատանքները լավատեսական երակ են բացում դիտողի մեջ: Նրանք կենսական թրթիռներ են հաղորդում լռելյայն դոմինանտ նուրբ զգացողություններով: Արվեստագետին հատուկ է դառնում գույների շողարձակումը պարզվում է, որ վաղ գույն չկա: ամեն մեկն ունի իր մարդությանն արտահայտչաձեւերի ազդեցության աշխարհը: Ու նրա կտավներից մեկ դեղինն է շողարձակում, մեկ մանուշակագույնը, մեկ ուրիշ տեղ կարմրայտը ու ամեն մի կտավ մի գույնի գերիշխող ազդեցությունն է կրում: Այսպիսին է երիտասարդ գեղանկարչի գունաշխարհը, ստեղծագործ էությունը: Հրանտ Միրզոյանի ստեղծագործական տարերքը ընթացքի մեջ է, եւ արվեստասերը, որ վաղուց ծանոթ է նրա ներկայացնակին, նոր սպասելիքներ ունի երիտասարդ արվեստագետից:

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Մի նոր ընտիր առականի

Ընթերցողին արդեն հայտնի էին արձակագիր Ռոբերտ Կարայանի «Օրեր եւ կրակներ», «Մեր մեջ գժեր չկան» վիպակները, «Թողեք ապրենք» պատմվածքների ժողովածուն եւ «Արեւը գեղեցիկ է մայրամուտին» վեպը, երբ 1979-ին լույս տեսան նրա «Փշոտ խարեր» առակների եւ զրույցների, իսկ 1985-ին՝ «Ցամաք ափեր» առակների ժողովածուները: Հայ իրականության մեջ դա եզակի է, երբ պրոֆեսիոնալ արձակագիրը նաեւ պրոֆեսիոնալ առակագիր է: Նրա առակները վաղուց հնչում են ռադիոյով, տպագրվում են մամուլի զանազան օրգաններում: Դրանք իրենց դասական արժեքով ու հնչեղությամբ, սրությամբ արձագանքում են մեր ժամանակակից խոհերն ու զգացումները, դասապարտում նորօրյա արատները, խոցերն ու հոգի բարքերը:

Այս տարի կարճ ժամանակով ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում էր գտնվում ճանաչված գրող եւ հրապարակախոս Ռ. Կարայանը: Այդ օրերին այնտեղի հայկական համայնքում հարգված հայրենասեր բարեգործ, Կարայանի նախկին համադասարանցի Նուբար Մխսի-Գեւորգյանի հովանավորությամբ լույս է տեսել «Առակների ցավեր քանի» սվար հատորը, որի փոքր մասը կազմում են նախկին ժողովածուների գործերը, իսկ մեծ մասը վերջին տարիներին գրված ստեղծագործություններ են: Ըստ էության, այն առակագրի ընտրանին է: Այնտեղի մամուլի նյութերը վկայում են, որ գիրքը մեծ ընդունելության է արժանացել քաղաքի հայության շրջանում: Գլենդելի Մայր Աստվածածին եկեղեցու սրահում կազմակերպվել է գրական երեկո՝ նվիրված գրքի ընթերցմանը: Երեկոն կարեւոր ու ցանկալի իրադարձություն է համարվել համայնքի հայության կյանքում: Գրքի արժանիքների մասին խոսել են գրականագետներ Ստեփան Թոփչյանը, Վահագն Մկրտչյանը, գրողներ Արմեն Տոնոյանը եւ Գեւորգ Քրիստինյանը, «Հայ կյանք» թերթի գլխավոր խմբագիր Աբո Չափարյանը: Աստուածաբանները Շնորհիկ Նազարյանը եւ Գրիգոր Օգարյանը վարպետորեն ունկնդիրներին են ներկայացրել Կարայանի չափածո եւ արձակ գործերը: Երգերով հանդես են եկել երգչուհի Անահիտ Շահնազարյանը, երգիչ Խորեն Պալյանը եւ ուրիշներ: Մեջբերենք երկու նմուշ. «Ախ երբ կլինի, որ մարդը մարդուն ձայն տա թե՝ մարդու ցավից եմ արթուն», «Ախ երանի, երանի դուռը փակվեր բերանի....»:

Հարկ է, որ գրքին նվիրված միջոցառումներ կազմակերպվեն նաեւ մեզ մոտ՝ Հայաստանի գրողների միությունում, Ազգային գրադարանում եւ այլուր, քանզի Կարայանի ստեղծագործությունները բարձր են գնահատել գրողներն ու գրականագետները: «Ռոբերտ Կարայանի առակներից էլերը չեն, որ երկար ապրելու շնորհ ունեն իրենց վրա, քանի դեռ մարդուս մեջ կապրի նրա դեւաբեւ հոգին» (Հ. Շիրազ)

ՏՐԱՉՅԱ ՀՈՒՍԱՆՅԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆրանսիացի դաշնակահար Ժակ Շաբը դարձյալ Երեւանում է

Արդեն ավանդույթ է դարձել գարնանը կամ աշնանը Երեւանում ֆրանսիացի դաշնակահար Ժակ Շաբին տեսնելը:

Այս անգամ Շաբը հանդես եկավ կոնսերվատորիայում եւ Հայաստանի կոմպոզիտորների միությունում, որտեղ համերգներից մեկը ջազային էր. Շաբն իմպրովիզացիա էր անում հայ ջազմենների հետ: Դրանից բացի, մեկ ամիս շարունակ կնոջ՝ Լիլ քաղաքի «Պոլիֆոնի» համույթի դիրիժորի հետ, վարպետության դասեր էր տալիս: Կոնսերվատորիայի ուսանողներն ու ասպիրանտները նրանց ղեկավարությամբ ծրագիր պատրաստեցին Ա. Վեբեռնի, Օ. Մեսիանի, Պ. Բուլեզի, Լ. Բերիոյի, Տ. Տակեմիցուի ստեղծագործություններից՝ առանձին դեպքերում ցուցադրելով նոր երաժշտություն նվագելու իրենց պատրաստակամությունը:

Շաբը լայն նախասիրությունների տեր դաշնակահար է: Նա չի սահմանափակվում որոշակի ոճային ուղղություններով կամ ազգային դպրոցներով, թեեւ, անկասկած, նրան առավել հոգեհարազատ է ֆրանսիական երաժշտությունը: Այս անգամ էլ ծրագրերում էին Պիեռ Բուլեզի «Նշագրությունները» եւ Առաջին սոնատը, Օլիվիե Մեսիանի «Չորս ռիթմիկ էտյուդներից» երկուսը, Տրիստան Մյուրայի «Գեսաբերանը»: Ռացիոնալ տրամաբանությունն ու գունային երեւակայությունը միավորող այդ երաժշտությունը Շաբի կատարողական ոճի այցեքարտը դարձավ: Նրա դաշնամուրային արվեստում հնչյունային արտաբերման մեղմությունը զուգորդվում է ձեւի կառուցվածքային ուրվագծման հետ: Այդ հատկության շնորհիվ հաղթահարվեց Բուլեզի առաջին ստեղծագործության՝ «Նշագրությունների» բլոկային կառույցի խայտաբղետությունը:

Շաբին բնորոշ իռացիոնալ մտածողությունը թույլ է տալիս դյուրությամբ հաղթահարել նոր երաժշտության բարդ տեխնիկական ոճը՝ առավել մատչելի դարձնելով ընկալման համար: Դա զգացվում էր Օ. Մեսիանի երկրորդ էտյուդի եւ Տ. Մյուրեյի հնչյունային «հրավառության»՝ «Գեսաբերանի» կատարման ժամանակ, որը սակայն ամենից շատ դրսեւորվեց Կառլհայնց Շտոկհաուզենի 9-րդ եւ 11-րդ «Քլավիրեցյուկների» կատարման ընթացքում: Շաբը Շտոկհաուզենի 9-րդ Klaviersthcke-ի սոլոատիկ ռացիոնալիզմը ենթարկեց վառ ձայնային ձեւին, իսկ 11-րդ Klaviersthcke-ում հոգեբանորեն ընդգծեց դրա ալեատորիկ, այսինքն կամայական տրամաբանությունը:

Կոմպոզիտորների միությունում Շաբը մասնակցեց Լուչանո Բերիոյի ձայնի եւ կամերային համույթի համար գրած O, King (նվիրված է Մարտին Լյութեր Քինգին) սիմֆոնիայի մի մասի կատարմանը: Մենեջերուհին Լինա Մաշինյանն էր: Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի համույթը ղեկավարում էր Նվարդ Անդրեասյանը: Նրա ղեկավարությամբ էլ հնչեցին բելգիացի Կարել Գոյվարտսի «Ջրհոսի ձայները» եւ Մարտուն Իսրայելյանի Սեռտետը:

Ժակ Շաբը մեծ հետաքրքրություն է դրսեւորում ժամանակակից հայկական երաժշտության հանդեպ: Ֆրանսիայում նա կատարել է Լեւոն Աստվածատրյանի, Աշոտ Զոհրաբյանի, Տիգրան Մանսուրյանի, Մարտուն Իսրայելյանի գործերը: Այս անգամ էլ դաշնակահարը Հայաստանից մեկնեց նոտաների նոր տրցակով: Իր հերթին Շաբը Ֆրանսիայից բերել էր հսկայական քանակությամբ նոտաներ եւ ժամանակակից երաժշտությանը նվիրված գրքեր, որոնք նվիրեց Երեւանի կոնսերվատորիայի գրադարանին: 1992 թ. նոյեմբերի քայլ էր կատարել հայտնի կոմպոզիտոր, Փարիզի բարձրագույն կոնսերվատորիայի պրոֆեսոր Միշել Ռեւերդին, որն այստեղ ելույթ էր ունեցել դասախոսություններով եւ «Պոլիֆոնի» համույթի կատարած երաժշտության մեկնաբանություններով:

Դժվար է գերագնահատել նման ընծաների կարեւորությունը մեր կրթության համակարգում առկա նվագացանկային գրականության բացը վերացնելու գործում: Ուզում ենք հուսալ, որ մինչեւ ժակ Շաբի հաջորդ այցելությունը այդ գրականությունը կիրառություն կգտնի հնչեցնելու համերգային հարթակներում, այնպես էլ ուսումնական առօրյայում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր

Սաքսոֆոնի երկրորդ շնչառությունը

Սաքսոֆոնի հեղինակ, բելգիացի վարպետ Ալֆոնս Սաքսը այս գործիքի մոդելների զգալի մասը պատրաստել է արծաթագօծ արույրից: Ողջ դարի ընթացքում դրանք պահվել են աննպաստ պայմաններում, եւ արծաթի շերտը չֆացել է: Գյուտարարի Փարիզի երաժշտության թանգարանում պահվող հավաքածուն վերականգնելիս, «էֆոլ» կենտրոնի եւ «էլեկտրիսիտե դը Ֆրանսը» ընկերության, մասնավորապես՝ վերջինիս կազմում գտնվող «Վալեֆտրա» էլեկտրաֆիզիկական լաբորատորիայի աշխատակիցները մշակել են մետաղամշակման ուրույն եղանակ: Էլեկտրոլիզի մեթոդով հեռացնելով կոռոզիայի հետքերը նրանք վերականգնել են գործիքի մակերեսը նախաստեղծ տեսքով:



Ա. Գ.

ԱԶԳ

Մարզական

ԹԵՆԻՍ

Ո՞վ կախաղի չեմպիոնի տիտղոսը

Գերմանիայի Հանովեր քաղաքում սկսվել է թենիսի աշխարհի առաջնությունը: Ի տարբերություն նախորդ տարիների, այս անգամ նրա ութ մասնակիցների վերջնական ցուցակը հայտնի դարձավ վերջին օրը, երբ ATP երեք մրցաշարեր ավարտվեցին Մոսկվայում, Ստոկհոլմում եւ Սանտյագոյում:

Աշխարհի առաջնության մասնակիցները նախ շրջանային մրցակարգով կխաղան երկու խմբերում: Դրանցից առաջինում այսպես կոչված «կարմիր» խմբում հանդես են գալիս Փիթ Սամփրասը (ԱՄՆ), Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա), Գրեգ Ռուսեդսկին (Անգլիա) եւ Կառլոս Մոյան (Իսպանիա): «Սպիտակ» խմբի մասնակիցներն են Մայքլ Չանգը (ԱՄՆ), Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան), Յոնաս Բյորկմանը (Շվեդիա) եւ Սերխի Բրուգեյրան (Իսպանիա):

Ամերիկացի Մայքլ Չանգը հաղթանակով սկսեց մրցաշարը

Մրցումների առաջին իսկ օրը խոշոր անակնկալ տեղի ունեցավ: Առաջնության հաղթողի գլխավոր հավակնորդ, աշխարհի թիվ 1 ռակետ Սամփրասը պարտություն կրեց Մոյայից, որի հնարավորությունները բարձր չեն գնահատվում: Իսպանացի թենիսիստը հաղթանակ տարավ 2-1 (6-3, 6-7, 6-2) հաշվով: Նույնպես 2-1 հաշիվ գրանցվեց Ռաֆթերի եւ Ռուսեդսկի հանդիպման ժամանակ: Հաջողության հասավ Ավստրալիայի ներկայացուցիչը: Համառ պայքարի մասին է խոսում խաղափուլերի հաշիվը 4-6, 6-3, 6-4: Ավելի շոշափելի էր համաշխարհային դասակարգման ցուցակում երկրորդ տեղ զբաղեցնող Չանգի առավելությունը Բրուգեյրայի նկատմամբ: Չանգը հաղթեց 2-0 հաշվով: Այս խմբի երկրորդ Կաֆելնիկով-Բյորկման հանդիպումն ավարտվեց երեկ երեկոյան:

Հանովերյան առաջնության ութ մասնակիցները պայքարում են ոչ միայն չեմպիոնի կոչման եւ բարձր տեղերի համար: Շատ բարձր է նաեւ մրցանակային հիմնադրամը՝ այն 3,3 միլիոն դոլար է:

Ռ. Ա.

ՇԱԽՄԱՏ

Չորս տարից հետո

ՀՇԿՏ-ի առաջնությունները

Հայաստանի շախմատիստի կենտրոնական տան առաջնություններում անցկացվեցին չորրորդ տուրի հանդիպումները:

Կանանց մրցաշարում միանձնյա առաջատարը կրկին Նաիրա Մովսիսյանն է, որը տարավ չորրորդ անընդմեջ հաղթանակը. այս անգամ նա սեւ գույնի ֆիգուրներով առավելության հասավ Արուսյակ Գրիգորյանի նկատմամբ: Ընդհանրապես առաջատարների խմբում ընթացող շախմատիստուհիների պարտիաներում զգալի էր սեւերով խաղացողների առավելությունը: Հաղթելով Անահիտ Հարությունյանին՝ երկրորդ տեղում է Լուսինե Պորեսյանը. նա 3,5 միավոր է վաստակել: 3-ական միավոր ունեն 3-7-րդ տեղերում ընթացող Նելլի Աղինյանը, Լիլիթ Գալոյանը, Նելլի Փիլոսյանը, Նոնա Սահակյանն ու Անի Ավանեսյանը:

Տղամարդկանց մրցաշարում առաջատար են երեք շախմատիստներ՝ Վարուժան Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Խաչատուր Մելքումյանը, որոնք 4-ական միավոր են վաստակել: Հետաքրքիր է, որ երեք առաջատարներն էլ վերջին տուրում հաղթանակներ տարան սպիտակ ֆիգուրներով խաղալիս: Երեք մասնակիցներ՝ Վիգեն Միրումյանը, Միխայել Ավետիսյանը եւ Ռուբեն Ստեփանյանը, ունեն 3,5-ական միավոր:

ՆԱՐԴԻ

Երեւանի առաջնությունն ավարտվեց, իսկ Մոսկվայինը կմեկնարկի վաղը

Նարդու «բակգամոն» («կարճ») խաղաձեւի հանրապետական առաջնությունը որոշ ժամանակով հետաձգվեց: Դրա փոխարեն Հայաստանի ազգային ֆեդերացիայի ակումբում անցկացվեց Երեւանի բաց առաջնությունը, որին մասնակցեցին մայրաքաղաքի, Վանաձորի եւ Կապանի 32 նարդիստներ:

Եզրափակիչում հանդիպեցին Լեւոն Պետրոսյանն ու Աշոտ Վարդապետյանը: 15-8 հաշվով հաղթեց եւ առաջին մրցանակին արժանացավ Երեւանի կերամիկական իրերի կոմբինատի արտադրամասի պետ Լ. Պետրոսյանը: Երրորդ տեղի համար պայքարում Արթուր Մուրադյանը 13-5 հաշվով առավելության հասավ Միհրան Ոսկերչյանի նկատմամբ:

Այժմ հանրապետության մի խումբ մարզիկներ կմասնակցեն նոյեմբերի 14-ին մեկնարկող Մոսկվայի բաց առաջնությանը: Առաջին անգամ անցկացվող միջազգային մրցումները խոստանում են շատ ներկայացուցչական լինել: Բավական է ասել, որ մրցանակային հիմնադրամը 500 միլիոն ռուբլի է: Ավելացնենք, որ մոսկովյան մրցաշարի կազմակերպիչը նարդու ջատագով Յուրի Հակոբովն է:

Ուկրաինայում նախագահ լինի, թե նախարար՝ մտքում «Դինամո» է

Չեմպիոնների լիգայում «Բարսելոնի» նկատմամբ Կիեւի «Դինամոյի» 4-0 հաշվով ֆանտաստիկ հաղթանակը ուկրաինական ֆուտբոլին վերադարձրեց Շչերբիցկու ժամանակները՝ խաղը ձեռք բերեց պետական նշանակություն, իսկ հետաքրքրությունը նրա նկատմամբ դարձավ քաղաքական հեղինակության հարց: Նույնիսկ գրոհայինների ծայրահեղ աջ ուկրաինական ազգային ասամբլեա կազմակերպությունը, հստակ գումարը սկսելով խաղի օրը, բացման խոսքում հույս հայտնեց «Դինամոյին» տեսնել հաղթանակած: Հաղթանակի ենթակայությունները գործնականում ծախսեցին Գերագույն ռադայի այդ օրվա առավոտյան նիստի աշխատանքները, պատգամավորները միայն ֆուտբոլի մասին էին խոսում եւ վկայում, որ Ուկրաինայում Շեւչենկո ազգանունով եւս մեկ դասական է հայտնվել:

Ուկրաինական հեռուստատեսությունը հաղորդեց, «Բարսելոնին» խփած Շեւչենկոյի երեք գոլերը բարձրացրին ոչ միայն ուկրաինական ֆուտբոլի հեղինակությունը, այլեւ՝ երիտասարդ հարձակվողի գինը: Այժմ արդեն խոսում են այն մասին, թե իբր Շեւչենկոն հետաքրքրել է «Մանչեսթեր Յունայթեդին», որը պատրաստ է վճարել նրա դիմաց ոչ թե 17 մլն, ինչպես «Միլանը», այլ 20 մլն դոլար: Կիեւի «Դինամոյի» նախագահ Գրիգորի Սուրկիսը եւ գլխավոր մարզիչ Վալերի Լոբանովսկին չհերքեցին այս թիվը, սոսկ հայտարարելով՝ Շեւչենկոն չի վաճառվում:

Լոբանովսկու խոսքերով, արտեղցուցիչ արդյունքի հասնելուն օգնեցին ոչ միայն ընտրված տակտիկան եւ «ֆուտբոլիստների բարձր կատարողական վարպետությունը», այլ նաեւ կատալոնցիների նախորդ խաղը «Ռեալի» հետ, որը խիստ հոգեբուժիչ էր: Վալերի Վասիլեւիչը խիստ մտահոգված է, որ Չեմպիոնների լիգայի խաղերի արդյունքով «Դինամոյին» սկսել են գերակայությամբ անվանել: «Մենք դեռ այդպիսինը ստեղծելու ճանապարհին ենք»:

Ար. Մ.

ՖՈՒՏԲՈԼ

Եզրափակիչի 23 մասնակիցները հայտնի են

Վանկուվերում հաղթանակով դաստիարակեցին կանադացիներին, ԱՄՆ-ի ֆուտբոլիստները աշխարհի առաջնության եզրափակիչի ուղեգիր նվաճեցին:

Այսպիսով հայտնի են եկող տարվա ամռանը Ֆրանսիայում անցկացվելիք առաջնության 32 մասնակիցներից 23-ը: Սա նշանակում է՝ Բրազիլիա, Ֆրանսիա, Իսպանիա, Անգլիա, Շոտլանդիա, Գերմանիա, Հոլանդիա, Դանիա, Նորվեգիա, Ավստրիա, Բուլղարիա, Ռումինիա, Կամերուն, Մարոկկո, Թունիս, ՀԱՀ, Նիգերիա, Արգենտինա, Կոլումբիա, Պարագվայ, Հարավային Կորեա, Մեքսիկա, ԱՄՆ:

ԿՈՆԿԱԿԱՖ

Կանադա-ԱՄՆ՝ 0-3
Մեքսիկա-Կոստա Ռիկա՝ 3-3
Սալվադոր-Յամայկա 2-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Մեքսիկա	9	4	5	0	23-7	17
2. ԱՄՆ	9	3	5	1	13-7	14
3. Յամայկա	9	3	4	2	7-12	13
4. Սալվադոր	9	2	4	3	9-12	10
5. Կոստա Ռիկա	9	2	3	4	10-11	9
6. Կանադա	9	1	3	5	4-17	6

Անցկացվեցին նաեւ ասիական երկու խմբերի հանդիպումները: Երկրորդում խաղերն ավարտվեցին: Հարավային Կորեան աշխարհի առաջնության եզրափակիչի ուղեգիր նվաճել է, իսկ Ճապոնիան դեռ շարունակելու է պայքարը առաջին խմբում երկրորդ տեղը գրաված թիմի հետ:

ԱՍԻԱ

Առաջին խումբ

Սաուդ. Արաբիա-Չինաստան 1-1
Կատար-Իրան 2-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Իրան	8	3	3	2	13-8	12
2. Ս. Արաբիա	7	3	2	2	7-6	11
3. Կատար	7	3	1	3	7-9	10
4. Քուվեյթ	7	2	2	3	7-7	8
5. Չինաստան	7	2	2	3	10-14	8

Երկրորդ խումբ

Արաբական էմիրություններ-Հարավային Կորեա՝ 1-3
Ճապոնիա-Ղազախստան՝ 5-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Հարավ. Կորեա	8	6	1	1	19-8	19
2. Ճապոնիա	8	3	4	1	17-9	13
3. ԱՍԷ	8	2	3	3	10-12	9
4. Ուզբեկստան	8	1	3	4	13-18	6
5. Ղազախստան	8	1	3	4	7-19	6

Իորդենեսկուն կշարունակի մարզել Ռումինիայի հավաքականը

Ռումինացի ֆուտբոլասերները թեթեւությամբ շունչ քաշեցին. նրանց սիրելի մարզիչ Անգել Իորդենեսկուն հավաքականի ղեկին կմնա եւս 10 ամիս, իսկ դա նշանակում է, որ նաեւ Ֆրանսիայի աշխարհի առաջնության ընտրանին Իորդենեսկուի հավանաբար կղեկավարի: Իորդենեսկուի հավանական պատասխանը մասին լուրերը սաստկացան հատկապես Ռումինիայի ֆուտբոլի ֆեդերացիայի գործադիր կոմիտեի նստաշրջանի նախօրեին, երբ որոշվելու էր Իորդենեսկուի հետ պայմանագրի ճակատագիրը:

Բարեբախտաբար, գեներալի կոչում ունեցող հավաքականի գլխավոր մարզչի ֆինանսական տարակարծությունները ֆեդերացիայի հետ բարեհաջող հարթվեցին: Պայմանագրի երկարացման ժամանակ նրան առաջարկեցին ամսական 10 հազար դոլար աշխատավարձ՝ մի փոքր միջ, քան Իորդենեսկուն պահանջել էր, բայց եւ զգալի շատ այն երեք հազարից, որը նախապես ֆեդերացիան առաջարկել էր եւ, Իորդենեսկուի խոսքերով, վիրավորական էր: Իսկ գործակցի նիստում նրա հասցեին հնչած այն կոշտ բանը, թե հայրենասեր չէ, այդպես էլ աջակցություն չստացավ: Բոլորը գիտեն, որ Իորդենեսկուն մերժել էր Շոտլանդիայում, Արաբական էմիրություններում, Հունաստանում եւ ԱՄՆ-ում մարզիչ աշխատելու գայթակղիչ առաջարկները՝ իր երկրի ազգային հավաքականի աշխարհի առաջնության նախապատրաստական ցիկլը հասցնելու տրամաբանական ավարտին:

Ար. Ա.

Նոյեմբերի 15-ին Եվրոպայի ութ թիմեր կանցկացնեն աշխարհի առաջնության որակավորման խաղերի պատասխան հանդիպումները: Իտալիայի հավաքականը Նեապոլում Ջանֆրանկո Զոլան, Անտոնիո Կոնտեն եւ Չիրո Ֆերրարան մարզումների ժամանակ

1/8-ի պատասխան խաղերը

Ֆուտբոլի եվրոպական երկրների գավաթակիրների գավաթի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումներից հետո որոշվեցին այն ութ թիմերը, որոնք կշարունակեն պայքարը: Դեկտեմբերի 5-ին կանցկացվի 1/4 եզրափակիչ խաղերի վիճակահանությունը, իսկ այդ փուլը կանցկացվի մյուս տարի:

Կոջաելիսպոր (Թուրքիա)-**Լոկոմոտիվ (Ռուսաստան)՝** 0-0 (1-2)
Վիչենցա (Իտալիա)-Շախտյոր (Ուկրաինա)՝ 2-1 (3-1)
Սլավիա (Չեխիա)-Նիցցա (Ֆրանսիա)՝ 1-1 (2-2)
Շտուտգարտ (Գերմանիա)-Էվերեն (Բելգիա)՝ 2-4 (4-0)
Ռոդա (Հոլանդիա)-Պրիմորյե (Սլովենիա)՝ 4-0 (2-0)
Չելսի (Անգլիա)-Տրոմսե (Նորվեգիա)՝ 7-1 (2-3)
Կոպենհագեն (Դանիա)-**Բետիս (Իսպանիա)՝** 1-1 (0-2)
Շտուրմ (Ավստրիա)-**ԱԵԿ (Հունաստան)՝** 1-0 (0-2)

Մուգ գույնով առանձնացված են 1/4 եզրափակիչ դուրս եկած թիմերը: Փակագծում տրված են առաջին խաղերի արդյունքները:

Շարունակվում են բասկետբոլի ազգային միության (NBA) խաղերը: Լուսանկարում գնդակի համար պայքարում են Ջեյթ Ասկինսը («Մայամի հիթ») եւ Թերիի Դեհերը («Սաքրամենթո Քինգզ»): Խաղը 102-82 հաշվով տարան Մայամիի բասկետբոլիստները

ԱԶԳ
ՕՐՎԱ ԹԵՄԱ

ՄԵԿՆԱԲԱՆԻ ՏԵՍԱԿԵՏ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման 5 խոչընդոտներ

Նույն վերնագրով երեկ մեր հրատարակած ամփոփ նյութը հետաքրքրություն է ստեղծել ընթերցողների մոտ, որոնցից ոմանք խնդրեցին «Ազատություն» ռադիոկայանի փորձագետ Լիզ Ֆուլլերի հոդվածը թարգմանաբար հրատարակել ամբողջությամբ:

1992 թ. գարնանից ԵԱՀԿ Մինսկի խումբը հետամուտ է միջնորդելու Ղարաբաղյան հակամարտության խաղաղական լուծման գործում: Ադրբեջանն արդեն ընդունել է Մինսկի խմբի համանախագահների ամենավերջին առաջարկ-նախագիծը, որ հակամարտության բոլոր 3 կողմերին առաջարկվել էր սեպտեմբերին: Հայաստանը դա ընդունել է որոշ հիմք հետագա բանակցությունների, սակայն վերապահումներով: Լեռնային Ղարաբաղը մերժել է դա: Այս դիրքորոշումները կասկածի տակ են առնում Մ. Նահանգների դիվանագետներից մեկի լավատեսական նախատեսությունը, թե հակամարտությանը վերջ տվող պաշտոնական համաձայնագիրը կարող է ստորագրվել 1997-ի ավարտից առաջ:

Հակամարտության լուծման 5 խոչընդոտներ կան, որոնցից 2-ը խաղաղ, իսկ 3-ը պրոցեդուրային կամ լոգիստիկական են:

Դրանցից առաջինը Ադրբեջանի կառավարության նկատմամբ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի հարցն է: Արկադի Ղուկասյանը, չճանաչված հանրապետության նախագահը, բազմիցս կրկնել է արդեն, որ ինքը դեմ է որևէ կարգավիճակի, որը Ղարաբաղը ենթակայեցնում է Բաքվին: Նա պահանջում է «հորիզոնական կարգ» 2 տարածքների միջև, առանց ճշգրիտ սահմանելու, թե ինչը նկատի ունի: Համադաշնակցային կարգավորումը, օրինակ, միտի պահպանելու Ադրբեջանի տարածքային անձեռնմխելիությունը, ինչը ԵԱՀԿ-ն պնդում է հիմք ընդունել լուծման բոլոր փաստաթղթերում: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը, իր հերթին, առաջարկել է «հնարավորինս լայն ինքնավարություն» Ղարաբաղի համար, սակայն նույնիսկ «ինքնավարության» կոնցեպցիան վարկաբեկված է ողջ նախկին խ. Միության մեջ որոշ նվազագույն իրավունքների ու շահերի շնորհում:

Քաղաքական 2-րդ խոչընդոտը ընդդիմությունն է, թե Հայաստանում եւ թե Ադրբեջանում, որևէ շոշափելի զիջման նկատմամբ: Ղարաբաղի լիակատար անկախությանը որևէ զիջում անելու օգտին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի պրագմատիկ հետեւողական առարկությունները Հայաստանի ընդդիմության կողմից դիմավորվում են նրան ազգային շահերի դավաճան հռչակելու եւ նրա հրաժարականը պահանջելու ճիչերով: Նմանապես, Ադրբեջանի Կլոր սեղանի ընդդիմադիր համախմբումը մերժեց Մինսկի խմբի վերջին առաջարկը, այն դիտարկելով որպես զիջումների պարտադրանք Բաքվի նկատմամբ, ինչը, նրանց կարծիքով, կավարտվի «Լեռնային Ղարաբաղի վրա վերահսկողության կորուստով»: Եվ խաղաղ դաշն կնքելուց առաջ համաձայնագիրը հասարակական քննարկման եւ որդեգրման հանձնելու մասին Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջարկը կարող է վերջին պահին վիժեցնել կարգավորումը:

Առաջին պրոցեդուրային կամ լոգիստիկական խոչընդոտը Ադրբեջանի պնդումն է, թե հակամարտությունը ոչ թե ներքին, այլ միջազգային է, եւ հետեւանք է Ադրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիայի»: Պնդելով, որ Երեւանն է ագրեսորը եւ, հետեւաբար, բանակցող կողմը, Բաքուն հետեւողականորեն մերժել է ուղղակի խոսակցություն վարել Ղարաբաղի հայկական ղեկավարության հետ:

Լոգիստիկական 2-րդ խոչընդոտը հակամարտության լուծման օրակարգի հերթականությունն է: ԵԱՀԿ-ի առաջարկած խաղաղության վերջին նախագիծը հիմնված է «հանգրվանային» կամ «փուլ առ փուլ» մոտեցման վրա: Այլ խոսքով, դա նախատեսում է մի շարք միջոցառումներ, որոնք սկսվելու են Ադրբեջանի 6 գրավված շրջաններից հայկական ուժերի հետքաշումով անկլավի ադրբեջանական բնակչության հայրենադարձությամբ եւ միջազգային խաղաղապահների տեղակայմամբ, որի պարտականությունն է ապահովել բնակչության վերադարձը Ղարաբաղի ապագա կարգավիճակի շուրջ պատշաճ խոսակցություններն սկսվելու են միայն այդ եւ այլ միջոցառումների իրականացումից հետո:

«Հանգրվանային» մոտեցումը Բաքվի կողմից ընդունվեց, սակայն մերժվեց Ղարաբաղի հայերի կողմից: Նրանք առարկում են, որ այն սիրում է իրենց զիջելու իրենց սակարկության միակ միջոցը՝ գրավված տարածքներ, եւ փոխարենը ոչ մի ապահով երաշխիք չի թողնում իրենց: Նրանք պատճառաբանում են, թե հենց որ խնդրո առարկա շրջաններից խաղաղ, Բաքուն կարող է մերժել բանակցությունների սեղան նստել: Փոխարենը Ղարաբաղի հայերը կողմ են հակամարտության «փաթեթային» լուծման, որտեղ բոլոր հաջորդական հարցերը (զորքերի հետքաշում, հայրենադարձում, միջազգային խաղաղապահների տեղակայում, Ղարաբաղի ապագա կարգավիճակի շուրջ պատշաճ խոսակցություններ) միաժամանակ լուծվում են փաստաթղթային մեկ համաձայնությամբ:

«Փաթեթային» եւ «հանգրվանային» մոտեցումների խնդրին սերտորեն առնչված է Ադրբեջանի կողմից վերահարձակման հնարավորության դեմ Ղարաբաղի անվտանգությունը երաշխավորելու անհրաժեշտությունը: Ղուկասյանը եւ Հայաստանի առաջին փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը առարկում են, որ միջազգային համայնքը Հայաստանին (հնարավոր է նաեւ այլ պետություններին) պետք է պատշաճ մանդատ տա որպես Ղարաբաղի անվտանգության երաշխավորողի: (Ղուկասյանը նշեց նաեւ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Մ. Նահանգների «եւ հնարավոր է նաեւ Իրանի» անունները): ԵԱՀԿ-ն վերջերս զինվորական պատվիրակություն ուղարկեց շրջելու շրջանում եւ արձանագրելու ԵԱՀԿ խաղաղապահ ուժերի կարիքները: Ղուկասյանը, այսուհանդերձ, կասկածում է, որ ԵԱՀԿ անդամ պետությունները համաձայնվեն հայթայթել ավելին քան «պարզապես խորհրդանշական» զինվորական մի ուժ, որ կտեղակայվի սահմանափակ ժամանակի համար եւ որ կարող է նահանջել ադրբեջանական զորքի զանգվածային հարձակման դեպքում:

Ի վերջո, կարգավորման հավելյալ խոչընդոտ է Իրանը: Իր ավանդական դիրքի եւ Հայաստանի հետ ունեցած ներդաշնակ հարաբերությունների շնորհիվ Թեհրանը չունի հետաքրքրություն ունի հակամարտության լուծման նկատմամբ: Սակայն քանի որ անդամ չէ ԵԱՀԿ-ի, նա զրկված է այն ֆորումից, որտեղ կարող էր պատշաճաբար մասնակցել խաղաղության գործընթացին: ԵԱՀԿ-ի նախորդի Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կոնֆերանսի անդամագրման ձեւի նպատակներից մեկն էլ Իրանը դուրս թողնելն էր: 1992 թ. փետրվար եւ մարտ ամիսներին իրանյան իշխանություններին հաջողվեց միջնորդել հրադադարի երկու տարբեր համաձայնություններ ձեռք բերել, սակայն երկուսն էլ հօդս ցնդեցին գրեթե անմիջապես): Մասնավորաբար, ըստ ՀՂԿ ղեկավար Արամ Սարգսյանի, Թեհրանը պնդում է, որ հակամարտության կարգավորման ընթացքում ռազմական ուժերի տեղակայումը կարող է ապակայունացնող ազդակ դառնալ: Հետեւաբար, կասկածելի է, որ առանց Թեհրանի օրհնության որեւէ խաղաղ կարգավորում տեւական կայունություն հաստատի տարածաշրջանում:

ԼԻԶ ՖՈՒԼԼԵՐ

Իրանի նախագահն անհրաժեշտ լիազորություններ չունի՞ նախընտրական խոստումները կատարելու համար

ԲԱՔՈՒ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՍԵՆՊԵՏ: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման, Իրանի նոր նախագահը ի վիճակի չէ կատարելու իր նախընտրական խոստումները: Մի արեւմտյան դիվանագետի ասելով, նախագահ Խաթամիի եւ կրոնական առաջնորդի միջեւ բախում է հասունանում: Ֆրանսպրես գործակալության հաղորդման մեջ ասվում է, որ Խաթամին արդեն երեք ամիս ղեկավարում է Իրանը, բայց նրա խոստացած բարենորոգումների նշանները դեռեւս չեն երեւում: Պահպանողական խորհրդարանը եւ Իրանի հոգեւոր ղեկավարությունը, որոնք օժտված են բարձրագույն իշխանության լիազորություններով, լրջորեն սահմանափակում են նախագահ Խաթամիի լիազորությունները:

Մինչդեռ Խաթամին ինքը ցանկանում է ընդլայնել նախագահական լիազորությունները եւ փորձ-ինչ մեղմացնել երկրի արտաքին քաղաքականությունը: Խաթամիին պատասխանող արմատական միջոցառումների մի խումբ կողմնակիցներ պահանջել են սահմանափակել հոգեւոր առաջնորդի լիազորությունները եւ փորձ-ինչ ընդլայնել նախագահի լիազորությունները:

Ֆրանսպրեսը գրում է, որ մինչեւ այժմ Խաթամին բարենորոգումներ ձեռնարկելու լուրջ փորձեր չի արել: Նրա հիմնական նպատակը եղել է «ժողովրդի նախագահի» համբավ ստեղծելը:

Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի
օժանդակության հիմնադրամ Հայաստան
Արեւելք-արեւելք ծրագիր

հայտարարվում է մրցույթ

«Կովկաս» թեմայով սեմինարին մասնակցելու կարգակցությամբ: Սեմինարը կազմակերպվել է Ստեֆան Բատորիի հիմնադրամի կողմից (Լեհաստան) եւ տեղի կունենա դեկտեմբերի 1-7-ը, Լեհաստանի երեք քաղաքներում՝ Վարշավա, Կրակով, Պոզնան:

Սեմինարին մասնակցելու համար հրավիրվում են տնտեսագետներ, քաղաքագետներ եւ սոցիոլոգներ Հայաստանից, Վրաստանից եւ Ադրբեջանից: Այն պահանջում է բարձր գիտական պատրաստություն: Մասնակիցները պետք է կարդան դասախոսություն իրենց երկրի տնտեսական, սոցիալական եւ քաղաքական իրավիճակների մասին: Դա կներառի նաեւ այնպիսի քննարկում, ինչպիսիք են՝

- Կովկասի էթնիկական պատկերը,
- բնական էներգետիկ ռեսուրսների օգտագործումը,
- տարածաշրջանի քաղաքական էլիտան:

Անհրաժեշտ է ներկայացնել.

- ինքնակենսագրություն (CV),
- երաշխավորագիր,
- դասախոսության թեզիսներ:

Դիմումներն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 20-ը, 1997 թ.:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Հասմիկ Բեգլարյանին, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան, հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ,
հեռ. 272119, 271719, 271713:

Հարգելի ընթերցող

Շարունակվում է կառի նախարարության «Կոնտակտ» պետական ձեռնարկության կողմից հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում եւ Համագործակցության մյուս երկրներում տպագրվող թերթերի, տեխնիկական, մասնագիտական, հասարակական-քաղաքական, գեղարվեստական ամսագրերի 1998 թվականի առաջին կիսամյակի բաժանորդագրությունը:

Մենք բաժանորդագրում ենք նաեւ Ռուսաստանի Դաշնության «Կնիգա-Սերվիս» հայտնի ընկերության անվանացուցակով տպագրվող գեղարվեստական, հասարակական-քաղաքական, մասնագիտական գրքեր:

Բաժանորդագրությունը կատարվում է հանրապետության քաղաքների ու շրջանների բոլոր փոստային բաժանմունքներում:

Երեւան քաղաքում հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար, փոխանցման կամ կանխիկ վճարման ձեւով, բաժանորդագրությունը կատարվում է թիվ 2 փոստային բաժանմունքում (հասցեն՝ Սարյան փ. 22, բարձրահարկ շենքի առաջին հարկում): Այդ նույն բաժանմունքում ուսումնական հաստատությունների, գրադարանների, բժշկական հիմնարկների, ինչպես նաեւ անհատ քաղաքացիների համար ռուսական պարբերականների անվանացուցակում չնշված բաժանորդագրության գինը սահմանվում է զեղչով, իսկ բոլոր քաղաքացիների եւ ուսանողների համար ռուսական կատալոգներով բաժանորդագրային գինն առավել ցածր է:

Բաժանորդագրությունների վերջին ժամկետը նոյեմբերի 14-ն է:

Բաժանորդագրվողները թերթերը եւ ամսագրերը կարող են ստանալ տարածքային բաժանմունքի վայրում կամ իրենց ցանկությամբ այլ հասցեով:

Երաշխավորում ենք բարձրակարգ սպասարկում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 53-80-06, 53-36-02, 71-66 հեռախոսահամարներով:

Շտապեք բաժանորդագրվել:

«ԿՈՆՏԱԿՏ» ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն

Նոյեմբերի 15-ին հայ բեմի վարպետ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի

ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻ

բենեֆիսը՝ նվիրված դերասանուհու ստեղծագործական գործունեության 50-ամյակին:

Նոյեմբերի 16-ին Գաբրիել Սունդուկյան-«Կտակ»:

Ներկայացումների սկիզբը ժ. 17.00-ին:

Տոմսերը վաճառվում են: Ընդունվում են կոլեկտիվ հայտեր:

Հեռախոսներ՝ 52-57-72, 52-76-70, 56-30-16:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունվում են ֆրանսերենից եւ ռուսերենից թարգմանության պատվերներ:

Զանգահարել՝ 25-01-59, ժամը 9-10-ը եւ 18-22-ը:

Հայտարարություն

Լուծարվում է «Աբոն Դավիթ» ար. կոոպերատիվը՝ գրանցված Երեւանի Խորհրդային շրջանի շրջգործկոմի կողմից 14.01.92-ին № 1/96 արձանագրությամբ:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27-22-57 ժամը 10-16, 58-33-26 ժամը՝ 18-23

ԿՈՐԵԼ է

Երեւանի բժշկական 1-ին բազային ուսումնարանի 1991 թ. շրջանավարտ Գայանե Ջորջի Կարապետյանի դիպլոմը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

4 սենյականոց բնակարան *(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):*

Զանգահարել՝ 72-89-83

«ՍՊՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 704. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության 12.11.1997. Գինը 100 դրամ